

ծաղիկ, փնջիկներ են շինում նորանից և այդ ծաղիկը կոչում է նորանցում Համբարձում, և փոքր աղջկայ ձեռքով բաժանում են դիւղի տներին և փոխարէն ստանում են իւղ, ձուղ բրինձ և այլ ուտելեղէն:

Ապա հաւաքւում են դաշտ, ընկոյզի ծառերի տակ, զրունում են, երգում են, զուռնայով պարում են, ժողոված թւտելեղէնը վայելում են, որոնց մասնակցում են և հասակակից տրդալք:

### ԸՆՑՈՒՆԿԸՆ ԿԵՇՆՔ ԵՒ ՍՊԼՈՌԻԹԻՒՆՆԵՐ

#### ՀՅՈՒՅՈՒՆԻՔ.

Ահա մի հանդէս, որ կատարում է մեծ շքեղութեամբ և ոչին զիւղերում մասնակցում են ոչ միայն հարսի ու փեսայի ազդականները, այլ և ամբողջ հասարակութեան անդամները: Պարսկահայ և Տաճկահայ գաղթականների մէջ մեծ շքեղութեամբ է կատարում այս հանդէսը:

Ինչպէս յայտնի է, ամենից տռաջ կատարում է նշանադրութիւնը: Սովորաբար տղայի ծնողները և աղդականները որոնում են յարմար հարսնացու լաւ գերդաստանից: Ջիրակում, Բասենում և Կարսում աղջկայ հայրը եթէ իւր աղջիկը հարսնութեան տալու նպատակ ունի՝ պատասխանում է «Ժամանակդիրէնէ, մինչև մեր տանը խորհուրդ կանենք», իսկ եթէ տալու միտք չունի, պատասխանում է, «կորուսոդ մեր տանը չէ, զսմաթէ Աստծուց ուգէ»:

Պատահում է որ հայրը կամենալով իւր աղջիկը հարսնութեան տալ օտար զիւղ, կանխօրէն վերաստուդում է տղայի կալողութիւնը, տունը, գոմն, ապրանքը, ապրուստը և այլն: Վերաստուգելուց յետոյ համաձայնում է նստել, բարեկամանալ, հիւրասիրուել և ստանալ փեսայի ծնողներից ընթալ, մահուդ, ձի, ատրճանակ կամ մի այլ պարգև, որ երբեմն նորից վերագարձնում է իւր փեսային, համբուրելով, նորա լի եսը: Այս ընծան կոչում է տնտեսութեան խուլաթ (տուն տեսնելու):



Левин. Фото

Обрядъ бритъа.

Թագուցրին սակրելու ծէսը.

*Le rite de couper des cheveux.*

Նշանադրութեան օրը վիեսալին տանում են հարսի տունը, հետն էլ զանազան ուստելիղէնները: Այդ տեղ հրաւիրում են բարեկամները, դրացիները և ծխատէր քահանան, որ ընթրիքից առաջ վիեսալի հետ առանձնանում է կանանց սենեակը և հարսնացուին վիեսալի գէմ կանդնացնելով հարցնում է նախ առաջինի և ապա երկրորդի համաձայնութիւնը, որ արտայալում է գլուխ խոնարհացնելով և ապա տղան մատանին հագնում է աղջկայ մատին և շարդաթը ձգում է նրա զլիսին, իսկ շրջապատողները կոչում են «Ըստուած շնորհաւոր անի»:

Եթէ նշանադրութիւնը վերջանալուց լիտոյ զոքանը իւր մօտ չպահի վիեսալին, սա խոկոյն և եթ պէտք է վերապառնայ խրեանց տունը: Նշանադրութեան հանդէսը կոչում է նշան:

Հետեւեալ օրը աղջկայ հայրը յարգի է հրաւիրում, այսինքն հացկելութեան է հրաւիրում բարեկամներին և նոցաներկալութեամբ մինը կանգնած՝ հատ հատ ցոյց է տալիս աղջկայ հանդերձեղէնը և տղալի տանից բերան ընծաները: Բարձրը ձայնով կոչում է. «Ըստուած շէն պահի Բարսեղ խնամուն, որ բերել և այսինչ խալաթը, որ արժէ 25 մանէթ, այսինչ խալաթը 50 մանէթ» և այլն և միշտ բարձր դնահատելով:

Անմիջապէս լիտոյ սկսում է սաշու (հարսնացուի երեսառեսնուկը), այնիւ դրամական նուէրներ հարսին վիեսալի, կընքաւորի և սորանց բարեկամների կողմից և լրաքանչիւր նուէրը և քանակութիւնը լայտարարուում է բարձրաձայն:

Հասնում է այն բոպէն՝ որ հարսին պէտք է գուրս բերեն խնամինների առաջ: Նորա զլուխը և երեսը ծածկում են քողով: Թրացիններից կամ բարեկամներից մի հառակով կլն առաջնորդում է նորան և կոչում է ուստա: Թրանը հասած՝ աղջիկը հեղալութեամբ զլուխ է խոնարհացնում հանդիսականներին և ապա նա և ուստան միմեանց յետեից ծանրաքայլ մօտենում են և համբուրում նախ քահանալի աջը, ապա քառօրի և ապա միւս հրաւիրուածների, որից լիտոյ նորից կանգնում են դրան մօտ:

Մի շիշ օղի, երկու բաժակ ափսէի մէջ դրած, ուստան լցնում է բաժակները, իսկ աղջիկը ափսէով մատուցանում է

մինը քահանային, միւսը քաւորին և ապա ամենքին՝ նոտած կարգով, կանխապէս իւրաքանչիւրէ ձեռքը համբուրելով։

Բաժակն ընդունելուց օրհնելուց և խմելուց յետոյ իւրաքանչիւր ոք զբամական նուէրէ է ձգում բաժակի մէջ աղջկայ համար իրրև և ըստեսնելիք և ուստան բաժակից հանում է դնում ափսէի մէջ։

Բոլորին օղի մատուցանելուց յետոյ աղջիկը նորից կանդնում է զբան մօտ, ուստան բանում է նորա երեսը, ցոյց է տալի բոլոր հանդիսականներին, լսում են շնորհաւորանք և ապա երկուսն էլ առանձնանում են։

Երեստեսնելիքի նուէրնելը պատկանում են աղջկանը, իսկ սաշուէ նուէրները ընդունում է աղջկայ կամ փեսայի հայրը և նորանով զարդ է գնում աղջկայ համար։

Սրպէս է վերջանում նշանալութիւնը զիրակցոց, Բատենցոց և Կարսեցոց մէջ։

Դարալագեազի զաղթած հայ գիւղերում, Աէս, Կորադիզ, Խաչքար և այն տղաքի հայրը կամ բարեկամները գնալով աղջկայ հօր տունը՝ խօսք են բանում, աստիճանաւար մօտենում են ացելութեան բուն նպատակին, եթէ փոխադարձարար համաձայնութիւն է կայանում, հանում են իւրեանց հետ բերած օղու շիշը և շնորհաւորական բաժակներ են խմում. հակառակ դէպքում շիշը չի կարող աշխարհ դալ։ Համաձայնութիւնից յետոյ աղջկայ մօրը յանձնում է ոսկի, կամ մատանի և կամ այլ նուէր և այս կոչում է բէհ։

Մի քանի ժամանակից յետոյ տղայի հսլը իւր քաւորով և բարեկամներով գնում են աղջկայ հօր տունը՝ տանելով տակի կամ մանեակ կամ այլ նուէր։ Միեւնոյն ժամանակ իւրաքանչիւր նոցանից տանում է մրգեղէն, ուտելիք, որ հայկերոյթից յետոյ դնում են առանձին առանձին ի ցոյց հանդուսիանների։ Սա կոչում է շիրընլըզ, Մինի բերած շիրընլըզը թողնում են ի վայելումն հիւրերի, իսկ մնացեալը տանում են աղջկայ մօտ։

Հեռաւոր հիւրերի ցրուելուց յետոյ մնում են մերձաւոր բարեկամները, որոնց մօտ գուրս է զալի հարսնացուն, մօտենում

է իւրաքանչիւրին, զլուս է խոնարհեցնում և ստանում պարզե, երեսնալայ:

Երեսնալայից յետոյ վերջանում է նշանադրութեան հանդէսը և երբ տղայի հայրը հրաժեշտ է տալու, նորա հետ վերադարձնում են նորա բերած բրիանի (տապակած ոչխար) ազդը (բռւդը):

Փեսալին տեսնելու համար, եթէ նորան չեն հրաւիրել դոքանչի տունը, աղջկայ հայրը մի բարեկամ կնոջ հետ այցելութեան է գնում, տանելով դևօչ, այն է պարզե և բրիան: Այնուհետև մինչև պսակը փեսան ուղարկում է հարսի համար ջրհօրնեացը և զատկին բրինձ, մոմ, մրգեղէն, կարմիր ձու, աջահամբոյր քահանալին տալու և ձեռքերի համար խինա:

Երեանում աղջիկն ու տղան իրար հաւանելուց յետոյ՝ տղալին բերում են աղջկայ տունը, ուր քահանան պահպանիչ ասելով երկուսի զլիխին ևս մատանին թոյլ դնում է տղայի աջ միջամատում և առաջարկում է աղջկան հանել և դնել իւր մատում՝ եթէ հաւանում է տղալին: Աղջիկը ամօթխածութեամբ մօտենում, հանում է և դնում իւր մատը: Քահանան նորից հարցնում է փոխադարձ համաձայնութեան մասին և դիմի շարժումով պատասխան ստանալով օրհնում է նրանց: Սա նշանադրութեան սկիզբն է կամ բէհը,

Ապա խկական նշանադրութիւնից մի օր առաջ, պատրաստութեան համար տղան ուղարկում է աղջկայ տունը միս, իւղ, գինի, բրինձ, օղի և մեղրամոմ. քահանան առաջ օրհնում է նշանը տղայի տանը և ապա զուռնայով հրացանաձգութեամբ, աղմուկով, բարեկամներով շրջապատուած, գնում են աղջկայ տունը, ուր խառնուելով նորա բարեկամների հետ՝ ուրախութիւն են անում, իսկ հարսները ու աղջկունք պարում են: Քահանան առանձին սենեակում միմեանց մօտ կանգնեցնելով նշանուածներին՝ նշանը տալիս է աղջկան և օրհնում է: Հրաւիրուածները ճաշում են և ցրւում:

Հարսանիքից մի կամ երկու շաբաթ առաջ պատրաստում է թթէթը, այսինքն տղան գնում է զանազան կտորե-

դէն իւր և հարսր հանդերձի համար, որ մեծ հանդիսով կարում են տղալի բարեկամները:

Քեասումը. Դարալագեազի նոր հայերի մէջ նշանագըր-րութիւնից յետոյ տղահայրը իւր կնոջով և բարեկամներով և քահանայով գնում է նոր խնամու տունը բնասումը կտրելու, այսինքն վերջնական փոխադարձ պայմանը որոշելու թէ փեսահայրը որքան ըրինձ, գինի, արաղ, մսացու և փող պէտք է ուղարկէ աղջկայ հօրը հարսանիքի պատրաստութիւնը տեսնելու համար: Տուած փողը կոչւում է նայդ կամ բաշլող:

Քեասումը անելու ժամանակ տղահայրը առանձին նուէր է անում գիւղի եկեղեցու օգտին, 50 կոպէկ կամ աւելի երեց-փոխին և մի ռուբլի գիւղի մէլիքին, այն է հասարակութեան տանօւտէրին:

Քեասում կտրելու սովորութիւնը, փող և խալաթ որոշելը կայ նաև ծիրակի, թասէնի և Կարսայ հայերի մէջ. քեասումի հետ որոշւում է և միւս նուէրների քանակութիւնը —մսացու կով կամ եղ, իւղ, չիր, գինի, ըրինձ և այլն, և այս ուտելեղէն-ները կոչւում են եգու կամ բարիսու:

Ղազախում կայ և այժմ կամաց կամաց վերանում է քեասումի սովորութիւնը, բայց նոցանում կոչւում է աստառածեւէր:

Այս նախապատրաստութիւններից յետոյ արդէն մօտենում է հարսանիքի կամ պսակադրութեան հանդիսի օրը: Թասէնում և ծիրակում նախկին ժամանակ, 3—4 օր հարսանիքից առաջ փեսալի տանից տանում էին հարմնացուի համար կրծքի արծաթեալ զարդ —ողակ և մի թոփի շիլա հարսին շապկացու:

Այժմ սորանց փոխարէն ուղարկում են մի կաւէ ծրագ, մի հաց և մի խնձոր, որոնք միասին կոչւում են Պարսեցոց մէջ պուման, իսկ թասենցոց մէջ բուրջալլ: Պումանը կամ բուրջալն ստանալուց յետոյ անմիջապէս՝ աղջկայ հայրըն աւելացներով նորա վերայ իւր կողմից մի մի ճրագ, հաց և խնձոր, ուրեմն իւրաքանչիւր տեսակից մի մի զոյդ իրբև զուգաւորութեան նշան՝ վերադարձնում է տղալի հօրը: Վորանից յետոյ արգէն ասում են թէ Ագոյի կամ Կարոյի աղջկանը բուրջալեցին:

Բուրջալը նշան է, որ աղջիկ հարսնացուին տնէ տուն պտտեցնելու ժամանակ է։ Արդարեւ, աղջկայ բարեկամները առանձնապէս հրաւիրում են խրեանց մօտ աղջկանը և նորա հետ հասակակից ազար աղջիկներին պարելու և ուտելու։

Հարսանիքի առաջին ճաշը տրում է կանանց, որոնց հրաւիրելու գուրս է զալի զիւղի մէջ քաւրակին՝ ուսին կամ գլխին դրած հարսնացուի համար նոր կարած քաթիթան կամ կար սն, իսկ ձեռքում ափսէի մէջ չարազ (քիշմիշ, լարլարու և այլն) գուռնան առաջին, միայնակ պատում է զիւղի մէջ և հրաւէր է կարդում կանանց։ Հրաւէրը կոչում է խնդրախու։ Հրաւիրուածները վերցնում են չարազից և հետաքրքրութեամբ զննում կարան կամ քաթիթան։

Հրաւիրուած կանալք փեսալի մօր համար տանում են ընծալ սեղան, այն է պանիր, իւղ, ձուաձեղ, գուլպա, արախ-ճին և այլ ալսալիսի բաներ, ով ինչ կարող է, գարսելով սոցա սինու մէջ և կամ սինի չունեցողը՝ մաղի մէջ։ Կանալք ճաշում են ցերեկով և հարսանիքի առաջին օրը, որի երեկոյին հրաւիրում են տղամարդիկի։ Սակայն եթէ փեսան և հարսը նոյն դիւզումն են, տղամարդիկանց ընթրիքը լինում է հետևեալ օրը, երեկոյին։

Երկու երեք օր առաջ տղամարկանց հարսանիքի են հրաւիրում փեսան և նորա քաւրը գուռնան առաջը և ձեռքում մի շիշ արագ։ Խրագանչիւր տան առաջ տան տէրը յարգանքով ընդունում է նորանց և մի բաժակ օղի է վայելում նորանց ձեռքից իրրեւ նշան, որ նա ընդունում է հրաւէրը, պարտաւորում է գալ հարսանիքի և սաշու տալ։ Նոցանից ով կամք չունի սաշու տալ, նա օղի չէ ընդունում և առաջին ընթրիքը վայելելուց յետոյ այլ ևս չէ մասնակցում հարսանիքին։ Սաշու տուողների համար, առաջին ընդհանուր ընթրիքից յետով, առանձին մսացու է մորթւում և առանձին կերակուրներ պատրաստում։

Արբաթ օրը հարկաւոր է հրաւիրել քաւրին և միւս ժողովրդականաց. ուստի մսացուն մորթելու օրը փեսան, նո-

րա ազափները, հայրը, մայրը, քոյրը և մօտ բարեկամները գնում են քաւորին հրաւիրելու:

Փեսան վերցնում է իւր հետ շաքարի կտորներ, կամ խնձորներ, նորա մայրը կամ քոյրը ձեռին մի փունջ ծաղիկ (մեխակ, մախմուր ծաղիկ, հոտաւէտ չորացած կամ կանաչ մարզա և ալլն), իսկ ազափները դաւաթով դինի, մի բաժակ ափսէի մէջ, շուրջը չոր միրդ շարած: Փունջը մատուցում է քաւորակնոջը, իսկ մնացեալներին մի բաժակ դինի:

Այսպէս է լինում երբ քաւորը և փեսան միևնոյն զիւղումն են, իսկ եթէ ջոկ գիւղումն են, այն ժամանակ քաւորը գալով փեսալի տունը, այն տեղ է պատրաստում ծառը, որ պարսկահայերի մէջ կոչում է ուրց:

Փեսան և հիւրերը հաւաքումուց յետոյ՝ ամէնքը միմեանց կից բոլորշի նատելով սկսում են բարձրաձայն գովել ուրցը, որ ունի իւր յատուկ երգերը: Ամենից առաջ գովում է քաւորը, ուրցը ձեռքում բռնած, այսինքն նա ասում է երգից մի տուն և ապա տալիս է կողքի նստածին, որ նոյնպէս երգելով մի տուն՝ տալիս է երրորդին և այն: Այսպէս ուրցը պտոյտ է անում մինչև երգի աւարտը.

Ուրցը կամ ըստ մեր ուստահայերի՝ ծառը, կագմուած է մի գլխաւոր փայտից, որի շուրջը թէք բարձրանում են ճիւղեր: Սորանց, ինչպէս և գլխաւոր փայտի վերայ շինած են խաչաձև փայտեր, որոնց ծալիքներում տնկում են խնձորներ: Գլխաւոր փայտի վերին ծալրում դրած է հորիզոնական դիրքով խաչ, որ կոչում է կարաւ և նորա խնձորները գլխախնձոր: Բացի խնձորներից՝ ուրցը դարդարում են նաև գոյն գդոյն թելերով:

Ուրցի գովասանական երգն Դարսալազմազի Կորադիդ, Աէս, Մարտիրոս, Փաշալու, Գնդէվազ և ալլ գլխակերում, ուր բնակուած են գաղթած հայեր, երգւում է այսպէս:

Էս թագն իր խաչ,  
Խաչի կոթն իր խաչ ու մաչ,  
Ճնախաւոր պսակդ,  
Մըեդ իր կանանչ:

Էս թագն իր խաչ,  
 Խաչի կոթն իր խաչ ու մաչ,  
 Ճնախառոր թագուհիդ,  
 Արևդ իր կանանչ:  
 Էս թագն իր խաչ,  
 Խաչի կոթն իր խաչ ու մաչ,  
 Գուխադ իր բուխարի  
 Որեւդ իր կանանչ:  
 Էս թագն իր խաչ,  
 Խաչի կոթն իր խաչ ու մաչ.  
 Զուխադ իր ալ մահուդ՝  
 Արևդ իր կանանչ:  
 Էս թագն իր խաչ,  
 Խաչի կոթն իր խաչ ու մաչ,  
 Բարաքդ (գօտի) իր ասպրահ (Քիրմանի շալ)  
 Արևդ իր կանանչ:  
 Էս թագն իր խաչ,  
 Խաչի կոթն իր խաչ ու մաչ.  
 Սոլերդ իր սաղրի՝  
 Արևդ իր կանանչ:  
 Էս թագը վիր թագի նման ի,  
 Դաւիթ մարզարացի թագի նման ի,  
 Որ թագն շուռը մուռը կայ:  
 Էս թագն վիր՝ թագի նման ի,  
 Սողամոն իմաստունի թագի նման ի,  
 Որ թագն շուռը մուռը կայ:  
 Էս թագն վիր թագի նման ի,  
 Մելքոն, Կասպար. Բաղդասար թագի նման ի  
 Որ թագն շուռը մուռը կայ:  
 Էս թագն վիր թագի նման ի,  
 Կոստանդին թագաւորի թագին նման ի,  
 Որ թագն շուռը մուռը կայ:  
 Էս թագն վիր թագի նման ի,  
 Ըսկար թագաւորի թագին նման ի,  
 Որ թագն շուռը մուռը կայ:  
 Էս թագն վիր թագաւորի թագին նման ի,  
 Սէնաքարին թագաւորի թագին նման ի,  
 Որ թագն շուռը մուռը կայ:  
 Էս թագն վիր թագաւորի թագին նման ի,

Յովհասափ թագաւորի թագին նման ի,  
 Որ թագն շուռը մուռը կայ:  
 Էս թագն վիր թագաւորի թագին նման ի,  
 Տրթաթ թագաւորի թագին նման ի,  
 Որ թագն շուռը մուռը կայ:  
 Էս թագն վիր թագաւորի թագին նման ի,  
 Մանասէր թագաւորի թագին նման ի,  
 Որ թագն շուռը մուռը կայ:  
 Էս թագն վիր թագաւորի թագին նման ի,  
 Կիրկեօր Լուսաւորչի թագին նման ի,  
 Որ թագը շուռը մուռը կայ:  
 Էս թագը ինչ ուզելի,  
 Թագաւորի մէր կայնած կուզի,  
 Որ շուռ կայ. (թագաւորի մայրը կանդնում է):  
 Էս թագն ինչ ուզելի,  
 Թագաւորը իւր ազափներով կայնած կուզի,  
 Որ թագն շուռ կայ. (նոյնը)  
 Էս թագն ինչ ուզելի,  
 Թագաւորի քոյրերը կայնած կուզի,  
 Որ թագն շուռ կայ (նոյն.)  
 Եկ բարե, եկ բարե,  
 Սուրբ Ծնունդին տանք բարե,  
 Թագաւորին ու թագուհուն տայ շատ արե:  
 Եկ բարե, եկ բարե,  
 Սուրբ խաչապուտին տանք բարե,  
 Թագաւորին, թագուհուն տայ շատ արե:  
 Եկ բարե, եկ բարե,  
 Քսան ու յորս մարդարէանց տանք բարե,  
 Թագաւորին, թագուհուն տայ շատ արե:  
 Եկ բարե, եկ բարե,  
 Տասներկու առաքելոց տանք բարե,  
 Թագաւորին, թագուհուն տայ շատ արե:  
 Եկ բարե, եկ բարե,  
 Երեք հարիւր վացունը վեց հայրապետաց տանք բարե,  
 Թագաւորին, թագուհուն տայ շատ արե:  
 Եկ բարե. եկ բարե,

Բառառն զինաւորաց տանք բարեւ,  
Թագաւորին, թագուհուն տայ շատ արեւ:  
Եկ բարեւ, եկ բարեւ,  
Քառասուն մանկանց տանք բարեւ,  
Թագաւորին, թագուհուն տայ շատ արեւ:  
Եկ բարեւ, եկ բարեւ,  
Երեք մանկունքին տանք բարեւ,  
Թագաւորին, թագուհուն տայ շատ արեւ:  
Եկ բարեւ, եկ բարեւ,  
Քառասուն կուսանաց տանք բարեւ,  
Թագաւորին, թագուհուն տայ շատ արեւ:  
Եկ բարեւ, եկ բարեւ,  
Ամենայն սրբոց տանք բարեւ,  
Թագաւորին, թագուհուն տայ շատ արեւ:

Ապա կանգնում են բոլորշի շղթայուած և թաղաւորին  
կանգնեցնելով շրջանի կեղրոնում, երեսը դէպի սղօթարան  
(արևելք), ազափները դովում են նորան հետևեալ երդով.

Թագաւոր, ինչ բերեմ քեզ նման,  
Կեարնան վարդն որ կբացուի,  
Խոտն (Հոտն) արևուդ նման:  
Թագաւոր, ինչ բերեմ քեզ նման,  
Նարկիզ ծաղիկ որ կծաղկի,  
Խոտն անեօշ արևուդ նման:  
Թագաւոր, ինչ բերեմ քեզ նման,  
Բալասան ծաղիկ որ կծաղկի,  
Խոտն անեօշ արևուդ նման:  
Թագաւոր, ինչ բերեմ քեզ նման,  
Սուսամբար ծաղիկ որ կծաղկի,  
Խոտն անեօշ արևուդ նման:  
Թագաւոր, ինչ բերեմ քեզ նման,  
Սուսամբար ծաղիկ որ կծաղկի,  
Խոտն անեօշ արևուդ նման:  
Թագաւոր, ինչ բերեմ քեզ նման  
Ամառուան վարդն որ կբացուի,  
Խոտն անեօշ արևուդ նման:

Թագաւորը, քաւորն և ազափները գնում են ուրբաթ  
օր փեսալի գոքանչին այցելութեան: Փեսան համբուլում է

նորա ձեռքը, իսկ նա փեսալի երեսը։ Փեսան և քաւորն ստանում են գովզա, արխալուղ և այլն ըստ կարողութեան։ Ապա պտտում են զիւղի մեծերի մօտ, համբուրում է փեսան նորանց ձեռքը. ծաղկափունջ է մատուցանում նորանց իբրև հրաւիրման նշան և նոքա էլ համբուրում են նորա երեսը։ Այս հրաւէրը կոչում է „խարնըսի խարար”։

Հրաւէրի հետևեալ օրից քաւորը միշտ իւր ձեռքում պրտտեցնում է ուրցը, մինչև հարսանիքի վերջը։

Հրաւիրուածների առաջ կատարւում է մսացու կովի կամ եղան մորթելու հանդէսը։ Հանդիսաւոր կերպով դուրս հն հանում նորան մի ընդարձակ տեղ, շրջապատում են նորան կանայք և տղամարդիկ։ Զուռնան ածում է „Քեօր օղլու” եղանակը։ Թագաւորը մօտենալով՝ ոտակապ և վայր ձգակ մսացուին՝ դանակով փոքր կտրում է նորա վզի կաշին, որից յետոյ մորթում է մի այ անձը։ Մսացուի մազից մի քանի դնելով արիւնոտ դանակի բերանին, թագաւորը պահում է իւր մօտ մինչև հարսանիքի վախճանը։

Երեանում փեսան նստում է մսացուի վերայ մինչև մորթել՝ վերջացնելը։ Ապա արիւնոտում է մի կողապէք և տայխ է իւր մօրը պահելու մինչև առագաստը։ Իսկ Դաւալու զիւղում արեան մէջ թաթախում են դանակ և մազէ յար։ Խաշիկ զիւղում մսացուի պոշից երկար մազերը իրար կապելով զօտի շինում և արեան մէջ թաթախելով կապում է թագաւորը իւր մէջքը, անմիջապէս մարմնի վերայ, որպէս զի շար աշըը չազդի նորա վերայ։

Դարավագեազի նոր հայերի (գաղթած) մէջ մսացուն մորթելուց յետոյ զուռնան „Քեօր օղլու” եղանակը փոխում է մեռնախաղի եղանակի, որով աղջկունք և հարսներ թաշկինակները ծածանելով պարում են մսացուի շուրջը։ Ապա տղամարդիկ նորանց հետ շղթայ կապած կազմում են ահազին շրջան և պարում են գետնդ (եալի)։ Այդ ժամանակ թագաւորի ազգականները զինի են բերում իւրեանց տներից և հիւրասիրում են ամենին։

Այլ գիւղերից հրաւիրուած հիւրերի գալու ժամանակ գուռ-

նան դուրս է գալիք ընդառաջ և ընդունում է իւրաքանչյիւրին, իրրեւ արտակարգ պատիւ:

Սոյն ուրբաթ երեկոյին պատրաստում են հարսնահօր տան համար, քեասումի համաձայն, բոլոր խոստացած նիւթեզէնը, որ կոչում է նանը գօշտ, (նան—հաց, գօշտ միտ) և բարձած ազափներից մինի վերալ, ուղարկում են խնամու տունը: Նա ասում է աղուէս:

Աղուէսին ուղեկցում են զունան, պարող աղջկունք և տղալք: Գորանց գնալու ժամանակ, ճանապարհին, ընդառաջ է դուրս գալիս գիւղի կտրիճներից մինը և առաջարկում աղուէսին կամ մենամարտել կամ տալ նորան մի գաւաթ գինի և ազատուել: Մենամարտը հազիւ է գլուխ գալի, այլ լանախ ուղածն ստանալով՝ հաշտութեամբ է վերջանում գործը:

Ղազախում, փեսան իւր ազափներով երբ գնում է մի այլ դիւդ իւր նշանածի հետ պսակուելու, նա իւր հետ անպատճառ պէտք է վերցնէ հաց, խաշած միս, գինի հարսնացուի գիւղի ազափների համար, որոնք խմբովին կտրում են գիւղի մօտ հարսնաւորների ճանապարհը և պահանջում են իւրեանց հասանելի ուտելեղէնը, որ նորանցում կոչում է ազափանա: Երբեմն ազափանալի համար ընդհարումն է ծագում:

Դարալագեագում նանը գօշտը տանելիս տանում են և խինա, որի կէսը քաւրակինը թագաւորի տանը պահում է ու մօտիկ հրաւիրուած ազգականներին բաժանելով՝ ստանում է նորանցից նուէր:

Աղուիսում և շրջակալքում, Հարսանեաց հանդիսի սկզբում, ուրբաթ օրը, սազանդարներով կամ զուռնարով կատարուում է տաշտաղուէրը: Հարսանիքի համար հաց թխող և խմոր հունցող կանայք տաշտի երկու ծայրից բռնած պարում են ու փեսալի հօրից ստանում են նուէր: Նոյն նուէրը տրում է թոնդիր վառելու և գաթան թխելու ժամանակ:

Սպա ընտրում է մառանապետ, որ նուէր ստանալով շալ գօտի պարտաւորում է վերահսկել ուտելեաց և ըմպելեաց վերայ: Կերակուր եփողները՝ ամանները ձեռքներին պարելով՝ ստանում են իւրեանց հաւանելի նուէրը և կանգնում են գործի:

Մարդկանց հրաւերը կատարւում է մի ընտրեալի ձեռքսվ, որ մի մետաքսէ թաշկինակի մէջ չոր պահած ծաղիկներ է բաժանում և թաշկինակն իրան վերցնում:

Հետեւեալ օրը, շարաթ, ընտրւում է մի ազափրաշի և սա դուռնալի ողեկցութեամբ, մետաքսէ թաշկինակը ձեռափախտի վերայ գրօշականման կապած, շրջագայելով հրավիրում է թագաւորի մօտ ազգականներին, որոնք մի մի թաշկինակ են կապում ազափրաշու փախտին և գուռնալին և որևէ է պարզե ուղարկում փեսալին:

Վերջը նուռն և խնձոր առած ազափրաշին հրաւիրում է քաւորին և քաւորակնոջը և գուռնաչու հետ սոցանից ստանում են նուէր մի թաշկինակի Քաւորակինը հետը առնում է մի կտոր շարար և կանաչ ու կարմիր մետաքսէ թելինանի Փորա համար քաւորակնոջ առաջ դնում են սինի, ջուր և հինա: Հէնց որ նա հինա և ջուր խառնում է իրար, զուռնան իսկոյն նուագում է, աղջկունք, կանայք և տղամարդիկ, որոնք աչքերը բևեռած նայում էին քաւորակնոջ արարքի վերայ, իսկոյն ձայն են տալի ամէն կողմից «Սատուած շընորհաւոր անի», և հինան սինով բարձրացրած պարում են:

Ապա մի խոնչալի մէջ պատրաստում են զանազան մըրդեղէն և շաքար և միւս խոնչալի մէջ հարսի հանդերձը և հինան: Երիտասարդ տղայք հինայով ներկում են մի խոյի ճակատը և մէջքը և կանաչ կարմիր թել են կապում վիզը, իսկ եղջիւրները զարդարում են վառ մօմերով:

Խոնչաներն ուսերին ազափրաշին զլուխ կանգնած՝ երիտասարդները զարդարուն խոյը առաջն արած՝ պտորտ են տալի հանդիսականների մէջ, և յետոյ քաւորակնոջ հետ, զուռնանուագելով տանում են այդ բոլորը հարսնացուի տունը՝ նորահարսի բարեկամները զուռնայով ընդառաջ են դուրս դալիս և ընդուռում են նորանց:

Տարած խոնչաները և խոյը նորից պտտցնում են հանդիսականների մէջ և յետոյ խոնչաները նուիրում են հարսնացուին, իսկ խոյը նորա եղածը, որից յետոյ քաւորակինը, ազափրաշին և նորանց ողեկիցները նորից վերադրառնում են վիեսալի մօտ:

Հին Նախիջևանում և հին Քուղայում հարսանիքը սկըսւում, (նորանց լեզուով կայսում՝ ա, բասենցոց լեզուով թռոնում՝ է, դադախում-նստում՝ ա) ուրբաթ օրը և այդ օրը քաւարը իւր հաշուով բաղնիք է հրաւիրում թագաւորին իւր ազափներով և այն տեղից իւր տունը հացիերութեան, ուր դուռնայի նուագածութեամբ ուրախութիւն են անում և պարում մինչև զիշերը:

Հետեւեալ օրը, շաբաթ, կէս օրից առաջ քաւորակինը բաղնիք է հրաւիրում հարսնացուին նորա հասակակից աղջկանց հետ, տանելով բաղնսպան կնոջ համար նուէր մրգեղէն և պարսկական շաքարի ամենափոքրիկ զլուխ:

Այդ օրը, առաւոստ թագաւորը ուղարկում է հարսին մի ոչխար՝ եղջիւրների վերայ խնձորներ անցուցած և վիզը կարմիր թաշկինակ կապած։ Խոկ քաւորին ազափների ձեռքով ուղարկում է խոնչա (շաքարազլուխ և մրգեղէն) և երեկոյեան նոյն ազափներով ուղարկում է հարսին մրգեղէն և չոր, չշպախած, հինա և փոխարէնը հարսի տանից ստանում է նուէր մի շապիկ՝ կարմիր կամ սպիտակ զանառուզ մետաքսէ կը-տորից։

Ազա երեկոյին՝ ազափները վառած մոմերով, զուռնալով, ուրախ և զուարթ գնում են քաւորի տունը՝ քաւորին հրաւիրելու թագաւորի մօտ։ Քաւորը իւր հետ առնելով հինա, մոմ, զանազան մրգեղէն, կանաչ-կարմիր ժապաւէն և հարսի նարուոր, բարեկամներով հանդերձ, շրջապատուած լիշեալ ազափներով՝ գնում են թագաւորի մօտ, որ ընդառաջ է գուրս զալի, նուիրում է նորան մի խնձոր կամ նուռն և ներս է հրաւիրում։

Երեանում նոյնպէս քաւորը իւր հաշուով հրաւիրում է բաղնիք փեսալին և ազափներին, ուր լողանում են, ուր ածելում են թագաւորի և ազափների երեսի մազերը, զանազան դովասանական խօսքերով հացցնում են թագաւորի նոր շորերը, ապա այդ տեղից զուռնայով գնում են ուղղակի քաւորի տունը, ուստում են միայն մրգեղէն և խմում են գլնի։ Պարում է առուաշինը քաւորի կինը կամ աղջիկը՝ ձեռքում ծածանելով

մետաքսէ թաշկինակ (բաղպաղի) և ապա պտրելով մօտենում է թագաւորին և թաշկինակը կախում է աջ ուսի վերայ՝ ծայրերը ձախ թեւի տակ: Այդպէս կապած թաշկինակը կոչւում է կոսպանդ:

Սպա ամբողջ խումբը, առնելով իւր հետ քաւորակնոցը, գնում են թագաւորի տունը: Աբտեղ ուտելուց և պարելուց յետոյ՝ գիշերը թթեթն (Հարսանեաց հագուստ) առած, գուռնայով, վառ մաշնալաներով, ուրախական աղաղակներ արձակելով գնում են հարսի տունը:

Հին Ձուղայում և Հին Նախիջևանում ընթրիքից առաջ, թագաւորին առանձին սենեակում նստեցրած՝ շրջապատում են նորան և պարում են: Սափրիչը ածելում է նորա երեսը և նորա կուրճքից դեռ չառ ած սպիտակ թաշկինակը, սափրիչը տալիս է հայելին թագաւորի ձեռքը և հանդիսականներին հրաւիրում է նուէրներ դնել հայելու վերայ սափրիչի օգտին: Առաջինը մօտենում է քաւորը, որ համբուրելով թաղաւորին, դրամական նուէր է գնում հայելու վերայ: Նորանից յետոյ մօտենում են թագաւորի մայրը, քոյրը և այլ բարեկամները:

Ընթրիքից յետոյ քահանան օրհնում է թագաւորի հանդերձը, որի ժամանակ թագաւորը և աջ ու ձախ կողմից քաւորը և խաչեղբայրը վառ մոմերով՝ չոգում են ծնկների վերայ: Քահանան իւր վարձն ստանալով քաւորից և թագաւորահօրից՝ աճուրդ է նշանակում ազափիքաշի ընտրելու և ազափիներից ով շատ է առաջարկում եկեղեցու օգտին, նա է ընտրում ազափրաշի:

Վերջինս իրաւանց տէր դառնալով՝ սկսում է հրաւիրականների առաջ օրհնած հանդերձը հացցնել թագաւորին և չուխի մի թեւը չհազցնելով կանդ է առնում մինչեւ թագաւորահայրը տայ նորան իւալաթ: Խալաթն ստանալուց յետոյ ազափրաշին տանում է թագաւորին միւս օենեակ և այնտեղ հաղցնում է միւս հանդերձը:

Սպա նուազածուները տեղափոխուում են կանանց բաժին, ուր հրաւիրում են թագաւորը, կնքաւորը և խաչեղբայրը:

Քաւորի կինը կամ քոյրը՝ կանաչ ու կարմիր ժապաւէնները ձեռքին, պարելով մօտենում է թագաւորին և ժապաւէնները դնում է նսուա արխալուղի կոճակիներում։ Սորանից յետոյ նոյն քաւորակինը կամ քոյրը պարելով մօտենում է ափսէի մէջ շաղախած հինան, որի մէջ աջ ձեռւի ճկոյթը թաթախում են ժագաւորը, կնքաւորը և խաչեղբայրը և զրամական նուէր ձգում ափսէի մէջ։

Դարակագեազի զաղթական հայերի մէջ սափրիչը ածելում է թագաւորի երեսը հրապարակով, հանդիսականների առաջ և կիսատ թողնելով նուէրներ է ոտանում հանդիսականներից, որ կոչում է ըլլուսում, ալոինքն պարտաւորութիւն։ Սորանից յետոյ թագաւորը փոխում է հանդերձը, նորա քոյրը կապում է նորա ուսին թաշկինակի, նորանց բարբառով խարջըկոթ, և աչքիրին ու դեղ է քաշում, որից յետոյ գնում են հարսի տունք։

Դաւալու գիս դում՝ խոր վիրապի մօտ, ուղարկում են հարսի համար մի տոսպրակ հինա ամանի մէջ, հետն էլ չամիչ, փշատ և այլ մրգեղէն, վրայից էլ թաշկինակով ծածկած։ Քաւորի աղջիկը իւր զլիսին դրած այդ բոլորը, զուռնալի հետ, տանում է հարսի տունը, ուր հարսնամայրը քաւորի համար ուղարկում է մի զոյտ զուրպա։

Խաչիկում առաջին ուսկապը կարմիր մետաքսից կապում է քաւորինը կամ քոյրը թագաւորի աջ ուսին, իսկ կանաչը ձախ ուսին կապում է հարսի տանը հարսնաքոյրը կամ մայրը։ Երկու ուսկապն էլ քահանալի բաժինն է։

Ղաղախում գեղեցիկ տեսարան է, երբ թագաւորը զարդարուած նոր հանդերձով և շրջապատուած հանդիսականներով և աղափներով, որոնք այնտեղ կոչում են մակարներ, կանգնած բացօթեալ, նորա քոյրը քեալաղայայ մետաքսէ թաշկինակը ձեռին ծածանելով, զուռնալի նուագածութեամբ պարում է ծանրաքայլ և մօտենալով եղբօրը, համբուրում է նորան և թաշկինակը աջ ուսով կապում է ձախ թեւի տակ։ Դա կոչում է այն տեղ ուսկապ։

Ջիրակի, կարսի և բասենի գիւղորայքում հարսանքի

երկրորդ օրը մի քանի երիտասարդներ քաւորի առաջնորդութեամբ, բայց առանց թագաւորի, գնում են հարսին բերելու և սոքա կոչւում են հարսնառներ:

Վերջիններիս գնալուց յետով՝ քաւորի ազգականներից մինը հրաւիրում է իւր տուն նորափեսին և ժողովում է նորա համար աղափներ, լողացնում են նորափեսին, հազցնում են նոր հանդերձ: Սափրիչը սափրում է նորա և աղափների երեսները: Այդ ժամանակից նորափեսին անուանում են թագաւոր: Նորա հիխի ֆասը կամ արախճինը սափրիչը վերցնում է իւրեան:

Սղափները թագաւորի վզով խաչածև անցուցանում են մետաքսէ թաշկինակ, որ և ասում է կոսպանդ, իսկ ոտերին, հազցնում են սօլեր: Կոսպանդը և սօլերը նուիրում է քո որը: Աղափները հինով ներկում են թագաւորի և իւրեանց ձեռքերը: Բայց նախքան թագաւորին հազցնելը, նորա հանդերձը քահանան օրհնում է և յանձնում է աղափներին:

Ալէ քսանդրապօլում աղափրաշին թուրը Դեռքին բարձր ձայնով դիմե՛ավ աղափների խմբին, ասում է. «Թագաւորի աղափներ, զիտէ ք մեր թագաւորն ինչ ունի»: Աղափրաշին ցոյց տալով արխալուղը, շրունակում է և Մի լաւ թանգարին շալ արխալուզ, դինը չորս թուման։ Խումբը երգում է:

Ասենք շնորհաւոր, ասենք շնորհաւոր  
Մեր թագաւորին հազար շնորհաւոր:

Նոյն աղափների միւս խումբը երգում է տաճկերեն.

Դիախ մուբարաք,  
Գէյսա մուբարաք,  
Բըզըմ գիւվանգեալ՝  
Ալ եշիլ գեարաք:

Այս երգի բառացի թարշմանութիւնն այս է.

Ասենք շնորհաւոր,  
Հագնի շնորհաւոր,  
Մեր նորափեսին՝  
Կարմիր, կանաչ է հարիւաւոր:

Ազափ բաշխն նորից ցոյց տալով մի այլ հազուստ, դի-  
ցուք շալուար, դոլում է նորան և գնահատում է շատ թանգ  
և առաջին խումբը կրկնում է. «Ասե՞ք շնորհաւոր» երգը, իսկ  
միւս խումբը՝ տաճկերէն երգը: Այսպիսով գովում է ամէն մի  
շորը և վերջինը գովում է գլխարկը և մետաքսէ կուսպանդը,  
որ երեք անգամ պտտցնելով թագաւորի գլխի շուրջը, դիմարկը  
դնում է նորա զլիխն, իսկ կուսպանդը կապում է ուսի վե-  
րալ:

Երբ հազուստով զարդարում են թագաւորին, ապա ոկր-  
սում են դովիճ նորա հանդերձի մասերը: Ազափների աաջին  
խումբը երգում է:

Էս օր մեղ էրնէկ,  
Մեղ հազար էրնէկ,  
Մեր թագաւորն է աջ  
Ըմկոց խաչ ու մաչ,  
Կոսպագն է կարմիր,  
Արեն է կանանչ:

Այս բոլոր տունը ամբողջութեամբ կրկնում է ազափ-  
դերի երկրորդ խումբը, որից յետոյ առաջին խումբը նորից շա-  
րունակում է և երկրորդը կրկնում է,

Էս օր մեղ էրնէկ,  
Մեղ հազար էրնէկ,  
Մեր թագաւորն է աջ  
Ըմկոց խաչ ու մաչ,  
Գոտիկն է արծաթ,  
Արեն է կանաչ:

Այսպէս յիշատակում են հանդերձի բոլոր մարսերը: Ապա  
սկսում են դովարանել անմիջապէս թագաւորին նոյն երդերով,  
որոնցով երգում են զիրակի զիւղերում և որոնք յիշատակում  
են ստորև. այն է „թագաւոր ինչ բերում քէ նման“, և այն,  
որից յետոյ „ինձոր, ինձոր զլիխնձոր“ և այն, դովիճով նաև  
սորա մէջ թագաւորին, թալուհուն, խաչեղբօրը, քահանալին,  
տիրացուներին, ազափներին և այն:

Բասենում, Ջիրակում և այլ տեղեր ազափրաշին հանդիսականների առաջ բազմացնելով՝ թագաւորին՝ սկսում է երգել և հանել նորա նախ գուլպաները, ապա շալուարը, ապա արխալուղը, ապա շապիկը և այլն։ Իւրաքանչյուրը հանելու ժամանակ նա բարձր ձայնով երգում է.

Օղան, հարամզադա սան,  
Կորիսերամ եալդաղասան,  
Գեաթր ջորաբն չեղարեմ,  
Դհա երան դագմանամ։

Սորա թարգմանութիւնն այս է.

Տղայ, խարերայ ես,  
Վախենում եմ խարես,  
Բեր գուլպադ հանեմ,  
Եկ ոչ մի տեղիդ չեմ դիպչիւ։

Այս տունը ամբողջութեամբ կրկնում են միւս ազափները, որ կազմում են մի առանձին երգեցիկ խումբ։ Ազափրաշին շալուարը հանելով՝ նորից շարունակում է երգել.

Օղան, հարամզադա սան,  
Կորիսերամ եալդաղասան,  
Գեաթր ուշկուրն չեղարեմ,  
Դհա երան դագմանամ։

Ազափները կրկնելուց յետով՝ ազափրաշին նորից շարունակում է.

Օղան, հարամզադա սան,  
Կորիսերամ եալդաղասան,  
Գեաթր արխալըրն չեղարեմ  
Դհա երան տաղմանամ։

Այսպէս երգելով և բոլոր հին հանդերձը հանելով ազափրաշին փոխում է երգը և երգի եղանակը և սկսում է նորը հազցնել և իւրաքանչյուր մասը հագցնելիս նա հրգում է՝

Գէյդըն, հայ գէյդըրըն,  
Բիլմազ իսա բըլդըրըն,  
Գեաթըր ջորաբըն գէյդըրեմ  
Դըհա երան դագմանամ։

Այն է

Հաղցրէք. Հայ հաղցրէք,  
Եթէ յի հասկանում հասկացրէք.  
Բեր, գուլպէդ հաղցնեմ,  
Եզ ոչ մի տեղիդ յեմ դիպշիլ:

Ազափիների խումբը արդ տունը կրկնելուց լիտոյ՝ ազափիքա-  
շին շարունակում է երգել հայերէն.

Ըսենք շնորհաւոր, ըսենք շնորհաւոր,  
Մեր թագաւորի գուլպէք շնորհաւոր:

Այս տունն էլ խումբը կրկնելուց լիտոյ՝ ազափիքաշին շա-  
րունակում է նորից թուրքերէն.

Գէցլըրն, Հայ գէցլըրն,  
Բիլմազ իսա բըլգըրն,  
Գեաթը ուշկուրն գէցլըրն  
Դհա երան դագմասամ:

Ըսենք շնորհաւոր, ըսենք շնորհաւոր,  
Մեր թագաւորի շալուար շնորհաւոր:

Գէցլըրն Հայ գէցլըրն,  
Բիլմազ իսա՝ բըլգըրն,  
Գեաթը քեօնագըրն գէցլըրն,  
Դհա երան դագմասամ:

Ըսենք շնորհաւոր, ըսենք շնորհաւոր,  
Մեր թագաւորի շապիկ շնորհաւոր:

Գէցլըրն, Հայ գէցլըրն,  
Բիլմազ իսա բըլգըրն,  
Գեաթը զիպունն գէցլըրն,  
Դհա երան դագմասամ:

Ըսենք շնորհաւոր, ըսենք շնորհաւոր,  
Մեր թագաւորի կարէն շնորհաւոր:

Գէցլըրն, Հայ գէցլըրն,  
Բիլմազ իսա՝ բըլգըրն.

Գեաթր կուրշաղն գէյլըրըմ,  
Դէա երան դագմասամ:

Լսենք շնորհաւոր, լսենք շնորհաւոր,  
Մեր թագաւորի գօտիկ շնորհաւոր:

Ապա թուրր կապելով թագաւորի մէջքը՝ ազափրաշին եր-  
գում է և ազափները կրկնում են հատևեալը.

Ոչ նազինան, նազինան,  
Քեաբար բիշար քեօզինան,  
Գեաթր ասպարն գէյլըրըմ  
Արգեանլարըն սեօզինան:

Սորանից յետոյ ազափները միացած դովում են թագա-  
ւորին հատևեալ երգով.

Մեր թագաւորն էր խաչ,  
Հայոց խաչ ու մաչ,  
Գուրրէքն էր նշխուն,  
Արևն էր կանանչ:

Մեր թագաւորն էր խաչ,  
Հայոց խաչ ու մաչ,  
Ջալուարն էր կապոյտ,  
Արևն էր կանանչ:

Մեր թագաւորն էր խաչ,  
Հայոց խաչ ու մաչ,  
Բինիշն (վերարկու) էր կարմիր,  
Արևն էր կանանչ:

Մեր թագաւորն էր խաչ,  
Հայոց խաչ ու մաչ,  
Փէշքիրն էր նշխուն,  
Արևն էր կանանչ:

Մեր թագաւորն էր խաչ,  
Հայոց խաչ ու մաչ,  
Գդակն էր բուխարա,  
Արևն էր կանանչ:

Մեր թագաւորն էր խաչ,  
Հայոց խաչ ու մաչ,

Ճապիկն էր կարմիր.

Օրեն էր կանանչ:

Այ նոր գեօգալ նոր գեօգալ,

Նոր և շնորհաւոր գեօգալ,

Քո բինիշն էր նոր, գեօգալ.

Սոյն այս դովը երգում է և Դաւալու գիւղում, որի ժամանակ բարեկամները փաթաթուում են թաղաւորի վզով և մի մի թաշկինակ դնում նորա գոտկում:

Բատենու գիւղերում թաղաւորի շորերը հաղցնելու ժամանակ ազափներից մինը հաղցնում է և միւսները երգում են հետևեալ երգը.

Մեր թագւորին ինչ պիտի,

Մէկ լաւ շաբիկմ պիտի.

Մեր թագւորին ինչ պիտի,

Մէկ լաւ դութ իշլիկմ պիտի.

Մեր թագւորին ինչ պիտի,

Մէկ լաւ գոտիկմ պիտի.

Մեր թագւորին ինչ պիտի,

Մէկ լաւ ֆալամ պիտի.

Մեր թագւորին ինչ պիտի,

Մէկ լաւ վալամ պիտի.

Մեր թագւորին ինչ պիտի,

Մէկ լաւ զիզլիկմ պիտի.

Մեր թագւորին ինչ պիտի,

Մէկ ջուկստ ջորաբմ պիտի.

Մեր թագւորին ինչ պիտի,

Մէկ ջուկստ կոնդարամ պիտի.

Մեր թագւորին ինչ պիտի,

Մէկ լաւ փէշքիրմ պիտի.

Նախկին ժամանակ՝ Բատենում թաղաւորի գլխին դնում էին ֆաս և ղազ (չալմա) և վրան ծածկում էին բինիշ, այսինքն կարմիր մահուդից երկար վերաբկու: Ամէն ոք ձեռնահաս չէր, երբէ թանգաղին հանդերձ, ունենալ իւր սեպհականը և հարկաղրուած էր խնդրել ուրիշներից և սորանից յառաջ էր գալի անդարմարութիւն: Ուստի դորանց փոխարէն այժմ զործ են ածում մորթէ գտակ և մաղէ եափնջի:

Հանդերձ հագնելու նշանաւոր հանդէսը վերջանալուց յետոյ թագաւորը համբուրում է քաւորի ձեռքը և շրջապատուած ազափներով գնում է նախ եկեղեցին՝ համբուրելու, ապա պըտում է զիւղի բարեկամների տները, ուր նուէր է ստանում դրամ, թաշկինակ և ալլն, իսկ նորա ազափները հիւրասիրում գունագան ուտելիքներով։ Ապա դառնում են թագաւորի տունը։

Սակայն թագաւորը քաւորի տանից դուրս գալուց սկսած մինչև թագը վերցնելը միշտ ծածկում է քիթը կլորած թաշկինակով, որ երբեմ թէ զիւղում հարրուի ցաւը չերևալ։

Տուն վերադառնալով՝ թագաւորը քաւորի և ազափների հետ բազմում է տախտակներից կազմած բարձրութեան վերայ, որ ասում է թախտ։ Երբ այս կամ այն հրաւիրուածը մըտնում է տուն, բարեւում է թագաւորին և ազափներին արտխօսքերով։ „Բարեւ պարոնաց“ և ազափները պատասխանում են։ „Աստծու բարին գալողաց“։

Հէնց որ, երբեմն, հրաւիրականներից մինը կամ միւսը ձայն է տալիս „Թոռն է“, ազափները պատասխանում են «Աստծու գառն է» և իսկոյն թագաւորը, կոր թաշկինակով քիթը ծածկած, ոտքի է կանգնում և կանգնած մնում, մինչև հիւրերից նստելու թոյլտութիւն խոտանալ։

Դեռ քանի թագաւորը քաւորի տանն է լինում, այնտեղ ազափները շինում են փայտից ծառ, որ պարոկահայերի մէջ, ինչպէս տեսանք, կոչւոմ է ուրց։ Ֆառի վերի ծայրը կոչւում է կաքաւ։ Ֆառը զարդարուած է զոյնզգոյն թելերով։

Թագաւորն իւր տուն վերադառնալուց յիտոյ ծառը բերա մեն քաւորի տնից, որպէս զի թագաւորի տանը գարզարեն նորան խնձորներով, ջղալնով և ապա զոյփարանեն։ Երկու ամսունացած տղամարդ նոտած բռնում են ծառը և նորանց առաջ կանգնում է լեզուով ճարպիկ մի տղամարդ։ Ըստինը մօտենում է քաւորակինը և նուիրում է մի խնձոր՝ վրան զարկած զոյնզգոյն թելերով զարդարուն փոքրիկ խաչ, որ կոչւում է ջղան։

Կանգնած ճարպիկը օղի մէջ պատցնելով ջղանը, դոււար-

նախօսութեամբ կոչում է «օրհնեա», տէր, ջամիաթ, անդաջ արէք, քաւորկինը սանահօր համար մի խնձոր է բերել, ջղան վրէն, հայով, հորով, նորա մարդը ինչ որ աշխատել է մալով, մարդով, տուէլ է էս մի խնձորին, որ կաժէ խոյ, խորասան, չինդ, չնդոսան, Բալխի, Բուխարալ, Ճաքի, Ջիրվան, Ճամախի, Ստամբուլ, էս օրս իրան տղին եղնի, շէն մնալ՝ շէն։ Ամենքն էլ ձայնում են. «շէն մնալ»։

Դրառ բռնադներից մինը տնկում է ջղանով խնձորը ծառի վերին ծայրում կաքաւի վերալ։ Ապա բերում են խնձոր թագաւորի քոլլը, մալլը կամ հարօը և միւս բարեկամներն ու հրաւիրուածները և նրանց բերածը գովելուց յետոյ դարդարում են ծառը։

Ապա երկու խմբի են բաժանուում և սկսում են զովասանել ծառը հետեհալ կերպով, Առաջին խումբը հարցական ձեւով դիմում է երկրորդին, իսկ երկրորդ խումբը պատասխանի ձեւով գարձնում է առաջինին։ Ուստի, որպէս զի կրկնութիւն չինի, առաջին խումբը նշանակում եմ ա տառով, իսկ երկրորդը բ տառով։

- ա. Օրհնեալ է Ցիսուս,  
Օրհնեալ է Քրիստոս,  
Խաչս բազամնեցաւ,  
Ծառս բազամնեցաւ,  
Ծաղիեցաւ ծառս կանանչ,  
Խչան նման էր,  
Լուսեղէն պտուղ տուաւ,  
Խչան նման էր,
- բ. Ծաղիեցաւ ծառս կանանչ,  
Խչան նման էր,  
Լուսեղէն պտուղ տուաւ,  
Խացփայ նման էր,
- ա. Այն ճեղբեր ալփին ալփին  
Խչան նման էր,  
Լուսեղէն պտուղ առաւ,  
Խչան նման է,
- բ. Այն ճեղբեր ալփին ալփին,  
Աստուածածինն էր,

- կուսեղէն պտուղ առաւ,  
Տէր Միածինն էր, հովեց  
ա. Այն էգուան հովն էր, հովեց  
Եւ աննման էր.  
Աղուէնուն գելնէր, մտնէր,  
Խնչան նման էր:
- բ. Այն էգուան հովն էր հովեց,  
Սուաքեալներն էր.  
Աղուէնուն գելնէր մտնէր,  
Արդար հոգիքն էր:  
ա. Այն բախչէն, կանանչ բախչէն  
Խնչան նման էր.  
Մով մը կար բախչի դուռը,  
Խնչան նման էր:
- բ. Այն բախչէն, կանանչ բախչէն,  
Այն մեր դրախտն էր.  
Մով մը կար բախչի դուռը՝  
Այն էլ դժոխքն էր:  
ա. Ղարդ (կանգ) եղաւ միջնածովին.  
Խնչան նման էր.  
Այն աղբիւր որ ոտնագնաց,  
Խնչան նման էր:  
բ. Ղարդ եղաւ միջնածովին,  
Էն մեղաւորներն էր.  
Այն աղբիւր որ ոտնագնաց,  
Գէտ որդանանն էր:  
ա. Այն աղբիւր որ մկրտեցին,  
Խնչան նման էր.  
Ճեղքերն ամէն ալփին ալփին  
Եայվաչ նման էր:  
բ. Ռղբիւր որ մկրտեցին,  
Սուրբ Կարապետն էր,  
Ճեղքերն ամեն ալփին ալփին,  
Այն խնկէ ծառն էր:  
ա. Էն սեղան բարձրասեղան  
Խնչան նման էր.  
Էն հնման բոլոր հնման,  
Եայվաչ նման էր.

- բ. ին սեղան բարձրասեղան  
իջմիածինն էր.  
ին հնձան, բոլոր հձնան,  
ին Նրուսաղէմն էր:
- ա. Այն խաչեր, բարձրախաչեր  
ինչան նման էր.  
Բուրգվառ ձեռք որ ժուռ կուգար՝  
Ինչան նման էր:
- բ. Այն խաչեր, բարձրախաչեր,  
Տէր քահանան էր.  
Բուրգվառ ձեռք որ ժուռ կուգար՝  
Այն սարկաւագն էր:
- ա. Այն սալամ (թռչուն) սար հնչելով  
Տեսէք այն հրն է.  
ին կաքաւ կարկաչելով  
Տեսէք այն հրն է:
- բ. ին սալամ սար հնչելով  
Պարդապետն է,  
ին կաքաւ կարկաչելով  
Նրիցաներն է:
- ա. ին ճնճուղ ճըլվտալով  
Տեսէք այն հրն է.  
Նրկու ճնճուղ կանանչ բաղլէն,  
Տեսէք այն հրն է:
- բ. ին ճնճուղ ճըլվտալով,  
Տիրացուներն է,  
Նրկու ճնճուղ կանաչ բաղլէն  
Օրդար հոգիքն է:
- ա. Օրեղակ նոր շաղեշաղ  
Ինչան նման էր:  
Լուսնեակ նոր սարն ելաւ,  
Ինչան նման էր:
- բ. Օրեղակ նոր շաղեշաղ,  
Այն թագուհին էր.  
Լուսնեակ նոր սարն ելաւ,  
Այն թագաւորն էր:
- ա. Ցիսուսի Քրիստոսի սուրբ զօրութիւնով  
Ծառս ծաղկեցաւ.

- Սուրբ Կարապետի սուրբ գօրութիւնով  
Մառս ծաղկեցաւ:
- բ. Սուրբ էջմիածնի սուրբ գօրութիւնով  
Մառս ծաղկեցաւ:  
Սուրբ Լուսաւորչի սուրբ գօրութիւնով  
Մառս ծաղկեցաւ:
- մ. Սուրբ Երուսաղէմի սուրբ գօրութիւնով  
Մառս ծաղկեցաւ:  
Սուրբ Նարեկացու սուրբ գօրութիւնով  
Մառս ծաղկեցաւ:
- ա. Մաղկեցաւ ծառս կենաց  
Տեսէք այն հրն է.  
Բազմեցաւ խէջն ի գլխուն,  
Տեսէք այն հրն է:
- բ. Մաղկեցաւ ծառս կենաց  
Էն թագաւորն է,  
Բազմեցաւ խէջն ի գլխուն,  
Էն իւր պատին է:
- մ. Այն խնձոր, գլխախնձոր,  
Տեսէք այն հրն է,  
Այն խնձոր, գըլվազլոր,  
Տեսէք այն հրն է:
- բ. Այն խնձոր, գլխախնձոր,  
Թագաւորահայրն է,  
Այն խնձոր գլխազլոր,  
Այն աղափներն է:
- բ. Այն խնձոր աջ աթոռին  
Տեսէք այն հրն է:  
Այն խնձոր ձախ աթոռին,  
Տեսէք այն հրն է:
- բ. Այն խնձոր աջ աթոռին  
Այն խելեղբացն է,  
Այն խնձոր ձախ աթոռին  
Էն թագուհին է:
- ա. Այն չորան, բարձրաշորան  
Եւ աննման էր,  
Հրեղէն թուրն ի ձեռին  
Խնչան նման էր.

- թ. Այն չորան, բարձրացորան,  
Այն հարսեղբայրն էր.  
Հրեղէն թուքն ի ձեռին՝  
Այն խէջնդրայրն էր.
- ա. Այն երկինք որ ամպ ու պարզ  
Եւ աննման էր.  
Երկու հաւք որ տեսնտափ (յոդնած)  
Խնչան նման էր.
- թ. Այն երկինք որ ամպ ու պարզ  
Այն խնամտիք էր,  
Երկու հաւք որ տեսնտափ,  
Խնամտոց խօսքերն է.
- ա. Այն խնձոր գլվազլոր  
Խնչան նման էր,  
Փունջ մանուշակ որ ծաղկեցաւ,  
Խայմաց նման էր.
- թ. Այն խնձոր գլվազլոր  
Էն ազափներն է,  
Փունջ մանուշակ որ ծաղկեցաւ,  
Էն աղջիկներն էր.
- ա. Էն փտած կոճն ի որմին,  
Տեսէք էն հրն է.  
Էն կարաս գլվազլոր,  
Տեսէք էն հրն է.
- թ. Էն փտած կոճն ի որմին  
Հալետըներն է,  
Էն կարաս գլվազլոր,  
Պառաւներն է.
- ա. Ճունն եկաւ պարկն ի բերան,  
Տեսէք էն հրն է,
- թ. Ճունն եկաւ պարկն ի բերան,  
Գեղի գզիրն է:

Սորանից լիտոյ դիմելով անմիջապէս թագաւորին սկսում  
են դոլարանել նորան հետևեալ երգով:

Թագաւոր, Բնչ բերեմ քէ նման,  
Քո կանանչ արևուդ նման,  
Էն բալատան ծաղիկն՝ որ կբացուի,  
Բացուի արևուդ նման:

Թագաւոր, ինչ բերեմ քէ նման,  
Քո կանանչ արևուդ նման,  
ին կարմիր վարդն որ կրացուի,  
Բացուի արևուդ նման։

Թագաւոր, ինչ բերեմ քէ նման,  
Քո կանանչ արևուդ նման  
Սիրուն մանիշակ, որ կրացուի,  
Բացուի արևուդ նման։

Թագաւոր, ինչ բերեմ քէ նման,  
Քո կանանչ արևուդ նման,  
ին խունկի ծաղիկ որ կրացուի,  
Բացուի արևուդ նման։

Թագաւոր ինչ բերեմ քէ նման,  
Քո կանանչ արևուդ նման,  
Ընթառամ ծաղիկ՝ որ կրացուի,  
Բացուի արևուդ նման։

Թագաւոր, ինչ բերեմ քէ նման,  
Քո կանանչ արևուդ նման,  
Ըուշառան ծաղիկ՝ որ կրացուի,  
Բացուի արևուդ նման։

Թագաւորին ծաղիկ պիտէր ծաղկունակ,  
Ծաղիկ ինչմնի պիտէր ծաղկունակ,  
Ծաղիկ պալասան պիտէր ծաղկունակ։

Թագաւորին ծաղիկ պիտէր ծաղկունակ,  
Ծաղիկ ինչմնի պիտէր ծաղկունակ,  
Ծաղիկ նունենի պիտէր ծաղկունակ։

Թագաւորին ծաղիկ պիտէր ծաղկունակ,  
Ծաղիկ ինչմնի պիտէր ծաղկունակ.  
Ծաղիկ համասփիւռ պիտէր ծաղկունակ։

Թագաւորին ծաղիկ պիտէր ծաղկունակ,  
Ծաղիկ ինչմնի պիտէր ծաղկունակ.  
Ծաղիկ պրաբեօն պիտէր ծաղկունակ։

Թագաւորին ծաղիկ պիտէր ծաղկունակ,  
Ծաղիկ ինչմնի պիտէր ծաղկունակ.  
Ծաղիկ նունութար պիտէր ծաղկունակ։

Թագաւորին ծաղիկ պիտէր ծաղկունակ,  
Ծաղիկ ինչմնի պիտէր ծաղկունակ,  
Ծաղիկ ոսկեծաղիկ պիտէր ծաղկունակ։

Վերջապէս գովարանները դիմում են թագաւորի ծնող-  
ւաց և աղջականներին հետևեալ երգով՝

Գնացէք, ասէք, թագւորահէր, թագւորահէր,  
Ծառդ գոված է.

Եզ մի խորվու, տիկ մի գինի  
Ծառ գովողինն է,

Գնացէք ասէք, թագւորամէր, թագւորամէր,  
Ծառդ գոված է.

Սել մը սեղան, խոյ մը խորվու  
Ծառ գովողինն է:

Գնացէք ասէք, թագւորաքուր, թագւորաքուր,  
Ծառդ գոված է.

Ուշ մի խորվու, գաւ մի գինի  
Ծառ գովողինն է.

Գնացէք ասէք, թագւորահարս, թագւորահարս,  
Ծառդ գոված է.

Զորս ջուխտ գուլպայ մի մահրամայ  
Ծառ գովողինն է:

Գնացէք ասէք, թագւորաղբէր, թագւորաղբէր,  
Ծառդ գոված է.

Երկու ճնճուղ, մէկ գարէ հաց  
Ծառ գովողինն է.

Գնացէք բերէք սինով սեղան,  
Գաւով գինի, ջուխտ գաթաններ,  
Նախշուն գուլբէք,  
Ծառ գովողին խալաթ տուէք:

Ծառ գովողներն ստանում են ձուաձեղ, հալուա, դինի,  
սեր, և այլ ուտելեղէն։ Ազափները ծառը զգուշութեամբ պա-  
համ են ապահով տեղ, որպէս զի աղջկունք չզողանան և տը-  
դարոց վերայ չծիծաղեն։

Ճամախու գաւառում, ուր կան 24 մեծ և փոքր հայ դիւ-  
ղեր Ղարաբաղի, Թաւրիզի, Ապահանի գաղթականներ, չունին  
հարսանիքի ժամանակ այն սիրուն հանդէսները, որ տեսնում  
ենք Բասենի, Շիրակի և կամ Դարալագեազի գիւղերում։ Սա-  
կայն ալստեղ էլ հայ ժողովուրդը զուրկ չէ կրօնական զգա-  
ցումներից. ալստեղ էլ փեսան և հարսը իւրեանց ապագայ յա-  
ջողութիւնը և բարօրութիւնը յանձնում են տեղական ուխտա-

տեղերի բարեխօսութեան, ուխտատեղիների, որոնք կազմում են մի ծառի տակ բազմեցրած մի տափարակ քար, կամ մի քանի հարարակ քարեր իրար վերայ դարսուած:

Հենց հարսանիքի սկզբում փեսան առանձին, շրջապատուած իւր ազափներով — մակարներով գուռնալի նուազածութեամբ և հարսն առանձին, շրջապատուած երկու հասակակից աղջիկներով և երիտասարդ հարսներով, ուխտ են գնում իւրաքանչիւրն իւր գիւղի մօտի սրբատեղերը, ջերմեռանդութեամբ աղօթում են, մոյ են վառում, խունկ են ծխում, համբուրում են անպաճոյն քարերը և դառնում են տուն: Եթէ գիւղի շորջը կան մի քանի ուխտատեղիներ, ոչ մինը զանց չեն անում, բոլորին էլ կարգով այցելում են:

Այսպէս, օրինակ, Զարգեարան գիւղում ուխտ են գնում «Խաչի Սրբ» կոչուած տեղը, որ գիւղից դէպի արևելք Ամրաբիւ լերան ծառախիտ անտառի մէջն է: Բահլիան գիւղում այցելում են «Նահատակ» ուխտատեղին, որ գիւղի եղբայր, բարձրադիր րլուրի վերայ է, հասարակաց հանգստարանի մէջ: Քեավանդի գիւղում հինգ սրբատեղիք կան, 1. «Գալլաքի բաղի նահատակ», 2. «Մուսիանց սուրբ», 3. «Ռուշանենց կամ քեօխենց սուրբ», 4. «Արքի Բաղ» և 5. «Թիեղի տակի սուրբ»: Այսպէս էլ միւս հարևան գիւղերում:

Մինչև այժմ խօսում էի գլխաւորապէս փեսալի նախապատրաստութեան մասին: Այժմ խօսեմ թէ ինչ նախապատրաստութիւններ և հանդէսներ են կատարւում աղջկայ, այսինքն նորահարօի տանը:

Հին Նախիջևանում և Հին Ջուղալում, շաբաթ երեկոյին հարսանիքի երկրորդ օրը, հասակակից երիտասարդ աղջկունք հարսնացուկն շրջապատելով հինա են գնում նորա ձեռքերի վերայ, ներկելու նրանց: Հետևեալ օրը, կիւրակէ. թագաւորը, քաւորը, խաչեղբայրը, ազափբաշին, վառ մոմերը ձեռքները, տանում են հարօի տունը նոր հանդերձը:

Հանդերձը հազցնելուց լետոյ հրաւիրում են քաւորին որ հարսի գօտիկը կապէ: Նախ քաւորը իւր գդակը ծածկում է հարսի գլխին և քամարի երկու ծալքից բռնած՝ երեք անգամ

անցէ կացնում հարսի գլխից և ոտքերից, ասելով և օխոտը տղայ բերես, մի աղջիկ» և ապա կապում է քամարը նորա մէջքը և նուէր տալի հարսի գլուխ կապողին, ու հեռանում է կանանց բաժնից:

Այս տեղ զոքանչը նոր մոմեր է դնում փեսալի և միւսների ձեռքում, նուիրում է փեսալին, ըստ կարողութեան, ժամացոյց, կամ երեքին էլ մի մի մետաքսէ թաշկինակ, դնում է նորա առաջ խոնչա գանազան ուտելեղէններով (Հաւ, Հալուա, զաթայ վարաղածածկ կամ կարմիր ձու և այն, որ ազափբաշին խսկոյն և եթ ժողովում, տանում է միւս օրը այգում վայելելու համար։

Դաւալու զիւղում խոր վիրապի մօտ՝ հարսի քամարը կապում է հարսի եղբայրը, առանց զլխարկ դնելու հարսի զլխին, իսկ քսորը ներս է հրաւիրում միայն փող նուիրելու գլուխ կապողին։

Դարալաղեազի դաղթական հայերի մէջ, կիւրակէ օբը, թագաւորը քաւորի, ազափների և բոլոր իւրապինների հետ զուռնալով դնում են հարսի տունը հարսին բերելու։ Եթէ հարսը մի այ գիւղումն է, այն ժամանակ լիշեալ անձինք զնում են ձիանց վերայ, հրացաններ և ատրճանակներ արձակելով և ձի արշաւելով։ Երբ մօտենում են հարսի զիւղին՝ հարսնքաւորներն աշխատում են փազել արտաքինով։ Զուռնալի նուազածութեամբ նոքա շատ արագ արշաւում են ձիանց վերայ, ճարպիկ շարժումներ են անում, հրացաններ արձակում, մի խօսքով՝ աշխատում են գիւղի ուշակրութիւնը իւրեանց վրայ դարձնել։ Սոքս արագութեամբ մօտենում են գիւղին և նորից ձիու գլուխը թեքում ու նոյն արագութեամբ յետ արշաւում գէպի զուռնաչիները, որոնք միս հանդիսականների հետ յետևից կամաց յառաջ են գալի։ Ձիարշակի ժամանակ զուռնան նուազում է, այդ կողմերում սովորաբար «Քեօր օղու» յայտնի եղանակը։ Ինչ կասկած որ գիւղացիք մեծ և փոքր դուրս են գալի նայելու։

Սակայն պէտք է ասել որ այս ձիարշաւը կատարում է ամենայն տեղ։ Նոյն սովորութիւնը մենք տեսնում ենք

Ջիրակում, Բասենում, Երևանի կողմերում, Ղազախում և այլուր:

Աղջկայ տունը շինում են թախթ թագաւորի նստելու համար: Աղջկայ հայրը նուիրում է թագաւորին թաշկինակ կամ քիսա և կամ այլ իր և նուէրը կախում է թագաւորի գատկից երեւալու համար: Նոյնը նուիրում են և քաւորին:

Եթէ թագաւորամայրը նոյնպէս եկել է հարս տանելու՝ նորա մասին երբեմն ասում են զուարճանալու և ծիծաղելու համար հետևեալ խօսքերը.

Խնամի, դու խոշ ես եկել,  
Դարդակ ու բոշ ես եկել,  
Երկու բլոճ ես բերել,  
Են էլ ճամբին ես կերել.  
Տերածդ է կանանչ կապաչ,  
Թևերն ու փէշը ծակ ա.  
Խնամի, դու խոշ ես եկել,  
Դարդակ ու բոշ ես եկել

Հացկերոյթից յետոյ հազցնում են հարսի հանդերձը: Հազցնում է մի կին, որ հարսի զլուխը չէ կապում մինչև քաւորը նուէր չշնորհէ նորան: Գլուխն յարդարելու ժամանակ գուռնան նուազում է, աղջկունք պարում են, իսկ հարսը տխուր լալիս է: Ոչ մի երգ չեն երգում:

Ապա մօտենում է թագաւորահայրը և կապում է հարսի քամարը երեք անգամ անցկացնելով նորա զլինից, մէջքից և ոտից: Հարսնահայրը նուիրում է իւր խնամուն մի գտակ ու ինքը նորանից ստանում է դրամական նուէր:

Աղջիկը (Հարսը) եօթն անգամ պտտում է հայրական թոնդրի շուրջ, մի անգամ ծնկաչոք համբուրում է թոնդրի շուրթը, համբուրում է հօր ոտքը, մօր ձեռքը, տան շեմի գետինը, դրսի դրան շրջանակը և հրաժարական է տալի հարական տանը, մայրական օջախին:

Սազանդարները կամ գուռնաշիները բռնում են շիմը և չեն թողնում որ հարսն անցնի, որպէս զի հարսի հայրը նուէր տայ նորանց: Նուէրը կոչում է դուռընելէ:

Երկու աղջիկ, որ ասւում են կըշտի քեւք (կողքի քոյլ), խսկոյն բռնում են հարսի երկու ձեռքը, որ արանքով մարդ չանցնի և արդպէս պահում են նորան մինչև հարսանիքի վերջը:

Ազափիները և թագաւորի կողմի մարդիկ, դուրսը կանգնած, գիտմամբ գոչումներ են անում «ճինինի, ճինինի, հարսը տարան», որպէս զի բարկացնեն հարսի ծնողաց և բարեկամներին:

Այդ հրաժարականի, լացի, աղմկի և ուրախութեան ժամանակ ազափիներից մինը, որ կոչում է աղուէս, ընկնում է հարսի հօրանց հաւերի ետևից և ծածուկ աշխատում է բռնել նորանց և տանել, որպէսզի յետոյ ազափիները ուտեն, թէֆ անեն:

Այստեղ արդ անձը հաւազողութեան համար կոչում է աղուէս և այս բառով մի անձնաւորութիւն հարսանիքի ժամանակ ամենայն տեղ հայերի մէջ կոչում է աղուէս, որի պատճառը շատ շատերը չգիտեն. բայց շատ տեղ էլ աղուէսը հաւ չէ զողանում, այլ լրաբեր է հարսանիքի ժամանակի:

Թագաւորը, ձեռի թաշկինակով մի խնձոր փաթթած, սեղմում է միշտ իւր շրթունքները նորանով: Եկեղեցին պսակի գնալու ժամանակ աղուէսներից մինը իւր հետ տանում է մի գաւաթ զինի և մի բաժակ: Խրաքանչիւր հանդիսական իրաւունք ունի զինով բաժակը մօտեցնել թագաւորի բերանին ու ասել. «Լիւար լիւասորչին, հաւատն է Քրիստոսին, օրհնեալ Աստուած, անիւշ, անիւշ՝ շ, անիւշ՝ և թագաւորը անձայն անժամիտ, խոնարհ, անտրտունջ, մի կաթիլ բերանն է առնում ու խնձորը նորից սեղմում շրթունքներին:

Ղազախում թագաւորը ազափիներով, բարեկամներով, գուռնայով գնում է հարսի տունը, այն զիշերը ընթրիք են անում, հարսի բաժիննը (օժիտը), որ լինում է տովորաբար զիւղի բաներ, օրինակ. կարպետ, խալիչա, թոկ, դօշակ, վերմակ, բարձ, ձիռ զարդն, խուրջին, ջուալ, պղնձէ կուժ, պղնձէ ամաններ և այլն, մի առ մի ցոյց են տալի հանդիսականներին և ամեն կողմից լսում է «Աստուած շնահաւոր անի, շէն կենալ»:

Եթէ փետան ուրիշ գիւղից է գայլի, նա նոյնպէս շրջապատռած է լինում խաչ եղբայրով, (որ թուրք ձեռին միշտ անանջատ լինում է թագաւորի մօտ և շրջում է նորա հետ), ազափիներով և բարեկամներով։ Դեռ սոքա կէս ճանապարհուում աղյուէսը առաջուց արդէն լուր է բերում հայուանքաւորների մօտենալու մասին։ Դիւղին մօտեցած՝ ձիարշաւ են սարքում, հրացաններ արձակում, ճարպիկութիւններ անում։ Սոքա իւրեանց հետ բերում են աղջկայ գիւղի ազափիների համար ուտելիք և ըմպելիք, որ կոչում է ազափանայ։

Երբ աղջիկը հօր տանից պէտք է դուրս գայ, այդ տեղ կատարուում է մի շատ սրտաշարժ տեսարան։ Զարդարուած նորահարս աղջիկը, շրջապատռած իւր ընկեր աղջիկներով, զուռնալի նուազածութեամբ բազմաթիւ հանդիսականների առաջ ծանրաքայլ գնացքով պտտուում է տան օջախի շուրջը, ծնկաչոք համբուրում է օջախի քարը, դուռը, տան շեմը, պտտուում է թոնրի շուրջը և ծնկաչոք համբուրում է թոնդրի շուրջը և ապա համբուրում է ծնողաց ձեռքը, որ վերջին հրաժարականը տայ։ Այս տեսարանը Ղազախի Ռեգունթալա գիւղում, դեռ ևս իմ մանկական ժամանակի լիշողութեանո մէջ խորին տպաւորութիւն է թողել։

Պօակ գնալու ժամանակ թագաւորը գնում է առաջից, նորա կողքին խաչեղբայրը իւր անբաժան թուրք ձեռին, իոկ մի քայլ թագաւորի լիտեկից գնում է հարսը երկու թէւը բըռնած հարսնեղբայրը և քոյլերը։ Հանդիսականները շրջապատում են դորանց և զուռնան ամէնի առաջ մեղմ եղանակով «առաւոտ լուսոյի» նման նուազելով ծանր քայլերով յառաջ է շարժում բազմութիւնը։

Ճանապարհի վերայ եղած տներից խսկոյն և եթ անխտիր կերպով դուրս են բերում ձուաձեղ և զինի և հիւրասիրում են ազափիներին և միւաներին։ Ազափիները երբեմն թագաւորի բերանում դնում են ձուաձեղի կտոր, որ ինքն երաւունք չունի վերցնելու։ Հէնց որ հասնում են եկեղեցու գուռը, զուռնան խսկոյն և եթ կտրում է իւր ձայնը մինչեւ հարս ու վեսայի եկեղեցուց դուրս գալը։

Երեւանի շրջակայ գիւղերում, երբ աղջկանը հաղցնում են շորերը, զլուխ կապող կինը թագցնում է հարսի քամարը և չէ տալի քաւորին, որպէս զի սորանից դրամական նուէր ստունայ: Երբ քաւորը կապում է հարսի քամարը, ասում է. „Առջնէ կդ տղայ լինի”: Քահանան հարս ու փեսալին ձեռք ձեռքի տուած կանգնեցնում է և ծնողքը շնորհաւորում են:

Ագուլիսում, կիրակի առաւօտ, ագափրաշին մակարներին (ազգիներին) մոմեր է բաժանում, իսկ ագափրաշու կինը աղջկանցն է բաժանում մոմ: Ազգիրաշին զրահաւորուած իւր իշխանական գաւաղանով, նայրին թաշկինակ կապած, բոլոր խումբն առած, աղմուկով և նուազածութեամբ տանում է հարսի տունը:

Հարսի հանդերձը հագցնում է քաւորի կինը, իսկ քամարը կապում է հարսի եղբայրը՝ նախապէս երեք անգեկացնելով զլխով, և ոտքերի տակից հանելով: Ապա աղջկունք և կանայք համբուրում են հարսին և դուրս բերում փեսալի մօտ:

Հրաժարականի ժամանակ աղջկանը պտտացնում են տան բոլոր մասերը, սենեակները, ներքնատունը, թռնդրատունը և այլն, բայց առանց ծնրազրութեան և համբոյների: Տնից դուրս գալու բոպէին տան ծառան ծածկում է դուռը և թագաւորից նուէր ստանալով՝ նորից բանում է:

Բարեկամները համբուրում են աղջկան, սա էլ համբուրում է նորանց ձեռքը. ծնողքը լալիս են և հանգէսը շարժում է դէպի Ակեղեցի: Զուռնաշլք կանդ են առնում, երեսները դարձնում են դէպի հարօնահօր տունը, նուազելու եղանակը զըռզըռոցի փոխելով՝ բարկացնում են ծնողաց ու բարեկամներին:

Մանամայրը իւր հետ բերած շաքարի կտորը և կանաչ կարմիր թելը լանձնում է քահանալին, որ ստ թելից շինէ հարսի համար նարօտ, իսկ շաքարը ձգի աղջկայ տնից բերած գինու բաժակի մէջ:

Հին նախիջևանի գիւղերում պատկ գնալու և սբակից

դառնալու ժամանակ հարսն ու փեսան բռնում են թաշկինակի երկու ծայրից, որ արանքով ոչ ոք չանցնի:

Բասենի, զիրակի և կարսալ զիւղերում նախքան հարսնառների զալը և հարսին տանելը, հարսի հասակակիլց աղջկունք մէն մենակ հարսին տանում են ուստի մօտ, ուր նորա գլուխը լուանում են, սանորում են և երբ իրեցկինը կապում է նորա զլուխը, աղջկունք երգում են նախ և առաջ հետեւեալ տաճկերէն երգը: Նա կոչում է «զլուխ զովալ»:

«Աղամա, աղամա,  
Գեալին, աղամա,  
Իրեցկին, իրեցկին,  
Բաշը բաղամա:

Ընամ յըխաըն եազալարի եազալն,  
Խաըն սովուղ սուկար՝ գեօնկիլի աղլասըն,  
Ընամն կըզ' վար, բանի նէշնասըն,  
Աղի՝ դաշլար, աղիլ, անամ գեօրընաըն.

Հաքտիլար, չաքտիլար օջաղն դաշի,  
Ղուրդիլար, ղուրդիլար զիւղինըն աշի.  
Հաղլըըն, չաղլըըն կոփում դարդաշի,  
Ճէն անայ, շէն բարայ, աւըն շէն օլսըն,  
Ըշտայ բան գեղարամ՝ երըն ենգ օլսըն:

Աթլաղըմ, աթլաղըմ, չըխտըմ էշիկի,  
Նըրըլըն, ղըրըլըն ղըզըն բէշիկի,  
Սուֆրադայ, սուֆրադայ զօյդըմ դաշըի,  
Ճէն անայ, շէն բարայ, աւըն շէն օլսըն,  
Ըշտայ բան գեղարամ՝ երըն ենգ օլսըն:

Անամըն թիւթսիւսի ազրինա թութար,  
Աթամըն սուֆրասը, մէշդանի թութար,  
Նըզըն ուզանդըսի քիմլարդան թութար,  
Ճէն անայ, շէն բարայ, աւըն շէն օլսըն,  
Ըշտայ բան գեղարամ՝ երըն գէն օլսըն:

Համ բաշընդա յրայ եախտըմ, եաննատի,  
Բեագ բարամայ էլլի սալդմ, գեալմաղի.  
Կարդաշ քիւչիւգ իկորի, դեալայ բիլմաղի,  
Ճէն անայ, շէն բարայ, աւըն շէն օլսըն,  
Ըշտայ բան գեղարամ՝ երըն դէն օլսըն:

Յելէ երեկուան քամին, յելէ երեկուան քամին,  
Բաղրբգեան մտել է գեամին, բաղրբգեան մտել է գեամին.  
Ըղջի, հարսնառդ եկաւ վերի կալերով,  
Հինայ բերին քեղի թղթի ծալերով,  
Ել հազի, ել կապէ. հարսնառդ եկեր է:  
Ըղօրդ խարեցին ջուխտմ ճղջմով.  
Քրոջդ խարեցին ջուխտմ փապուճով.  
Հօրդ էլ խարեցին լիւլը թիւթիւնով.  
Մօրդ էլ խարեցին թուղթմ պուռնութով:

Հարկաւոր եմ համարում վերոյիշեալ տաճկերէն երգի թարգ-  
մանութիւնը դնել այսոնեղ, նոյնպէս և միւս ստորև լիշեալ  
երգերի թարգմանութիւնը իւր տեղում:

«Մի լար, մի լար,  
Հարս, մի լար,  
Իրիցկին, իրիցկին,  
Գյուխը մի կապիր:

Մայրս դուրս գայ ամարանոցներ՝ վայելի,  
Խյի սառը ջրեր, որ սիրու կանգնի,  
Մօրս աղջիկ ունի: Էլ ինձ ինչ անի,  
Թեքուէք, սարեր, թեքուէք: մայրս երևի,  
Քաշեցին, քաշեցին օջաղի քարը,  
Սարքեցին, սարքեցին բրինձով փլաւը, (Հարսնի քի կերակուր)  
Կանչցէք, կանչցէք բարեկամիս, եղբօրս,  
Ճէն հայր, շէն մայր, տունդ շէն մնայ,  
Ահա ես գնում եմ, տեղդ լայն մնայ:

Զիաւորուեցի, ձիաւորուեցի, դուրս եկայ,  
Կոտրուի, կոտրուի աղջկայ օրօրոցը.  
Սուփրի մէջ, սուփրի մէջ թողի գդալը:  
Ճէն հայր, շէն մայր և այն:

Մօրը ծուխը ծուռը կրծխի,  
Հօրս սեղանը հրապարակ կըրռնի.  
Աղջկայ ասպանդակը հի կըրռնի,  
Ճէն հայր և այն:  
Քամածառի զլիսին հրագ վառի, չվառուեց,  
Բէգ հօրս գեսպան ուղարկեցի, չեկաւ,  
Սղբալրս փոքր էր, զալ չկրցաւ,  
Ահա ես գնում եմ տեղդ լայն լինի:

Ապա, աղջկունք երգում են այլ եղանակով հետևեալ երգը նորահարսի մօր, քրոջ, մարաքրոջ մասին, որոնք այդ հանդիսին սովորաբար ներկայ չեն լինում:

Համամ ջուպպասի,

Թոխաթ վալասի,

Չաղըրն անասի՝

Գեալսն սարըլսըն

Բոյննայ՝ աղասըն,

Եօլայ սալսըն.

Համամ ջուպպասի,

Թոխաթ վալասի,

Չաղըրն բաշըսի,

Գեալսն սարըլսըն

Բոյննայ՝ աղասըն,

Եօլայ սալսըն.

Համամ ջուպպասի,

Թոխաթ վալասի,

Չաղըրն խալասի,

Գեալսըն սարըլսըն

Բոյննայ՝ աղասըն,

Եօլայ սալսըն.

Ահա երգի հայերէն թարգմանութիւնը.

«Բաղանիքի վերարկու,

Թոխաթ քաղաքի մետաքսէ թաշկինակ,

Կանչեցէք մօրը,

Գայ փաթաթուի,

Վզովը, լայ,

Ճանապարհ ձգի.»

Նոյնը կրկնում է քրոջ և մօրաքրոջ (խալա) մասին:

Երբ ուստի մօտ «զլուխ գովալու» հանդէոը կատարում է, այդ միջոցին արդէն հարսնառները գուռնայով, աղմկով մօտենում են զիւղին: Նորանց առաջ գուրս են բերում զիւնի, արադ, հիւրասիրում են նորանց և ապա տանում են ուղղակի ուստի մօտ, ուր որ հարսն է:

Հարսին շրջապատող աղջկունք այդ տեղ նորից մի երգ են

երգում տաճկերէն, որի մէջ բացադրելով աղջկայ ազդականների բացակայութիւնը, նկարագրում են հարսի դրութիւնը:

Արմեղի ալ դըր բունըն,  
Զիգիթը քեալ դըր բունըն,  
Աթասը եօխ աղասըն,  
Կարդաշը լալ դըր բունըն:  
Արմեղի ալ դըր բունըն,  
Զիգիթը քեալ տըր բունըն,  
Խաջըսի եօխ աղասըն,  
Գալինի լալ դըր բունըն:  
Արմեղի ալ դըր բունըն,  
Զիգիթը քեալ դըր բունըն,  
Խաջըսի եօխ աղասըն,  
Բիբիսը լալ դըր բունըն:

Ահա սորա թարգմանութիւնը.

Սորա խնձորը կարմիր է,  
Սորա սերմը խակ է,  
Հայր չունի որ լայ,  
Եղբայրը սորա համր է:

• • • • •  
Քոյք չունի որ լայ,  
Սորա հարսը համր է:

• • • • •  
Մօրաքոյք չունի որ լայ,  
Սորա տատը համր է:

Ապա զուռնան նուռագում է, աղջկունք մի տեսակ պար են բունում, որ կոչում է թեխմախ և զուրս են բերում հարսնացուին: Տղաքը ձայնում են շաբաշ: Արդէն երեկոյեան դէմ է լինում, որ բոլոր հանդիսականները հարսին առած՝ ծանրաքայլ շարժում են դէպի հարսնահօր տունը:

Այս տեղ պէտքէ լիշել որ այն տեղի դիւղերում հազիւ է գտնուում այնպիսի մի տուն, որ իւր մեծութեամբ կարողանար տեղաւորել իւր մէջ դիւղի բոլոր հրաւիրուածներին, ուստի այդ պէտքէ համար մաքրում լարմարեցնում են մեծ գոմեր:

Քաւորը, որ միշտ լինում է հարսնառների շարքում, բերում է իւր հետ հարսի հանդերձը և հինա, թղթի մէջ փաթթած և սինու մէջ դրան։ Հինարվ սինին Ռւստան դընում է իւր գլխի վերայ և առաջինը ինքն է պարում. ապա տալիս է միւս աղջկանց, որոնք հերթով պարում են և վերջը սինին դնում են քաւորի առաջ, որպէսզի նա 15, 20 կոպէկ նուէր ձգի մէջը՝ պարող աղջկանց համար։ Այդ գլշերը աղջկունք հինով ներկում են իւրեանց և հարսի ձեռքերը։

Հետևեալ օրը, աղջկայ հայրը ճաշ է պատրաստում հիւրերի համար, կերակուր պատրաստող կինը պղնձների բերանը չէ բանում և կերակուր չէ բաժանում, մինչև քաւորը նորան նուէր չանի, 20 կոպէկից մինչև 1 ռուբլի։

Ճաշը վարելուց յետոյ, աղջկայ հայրը հանդիսականների առաջ թափում է բոլոր օժիտը, ինչ որ պատրաստել է իւր աղջկայ համար, որ կոչում է ջնէզ։ Ջնէզը զիւղերում սովորաբար լինում է վերմակ, բարձեր, զուլպաներ, մարբաշ, խորջին և այլն։ Կանչողը հատ հատ ցոյց է տալի հանդիսականներին, իրար վերայ դարսում և վրան նստելով չի վերկենում տեղից, մինչև նուէր չստանալ (երբեմն մինչև 10 ռուբլի) փեսահօրից հարսնահօր օգտին։

Տղամարդկանց մօտ ջնէզը զննելու միջոցին՝ կանանց բաժնում սովորաբար զիւղի իրիցկինը, եթէ սա չկայ՝ մի այլ կին կապում է հարսի գլուխը և նուէր է ստանում քաւորից, որ ասւում է զլօխնկապելիթ, և զօտիկ կապելու համար նոյնպէս նուէր, որէ զօդելկապ. իսկ աղջկունք, որ ըլուններից փնջիկ են շինում հարսի գլուխ զարդարելու համար, նոյն պէս նուէր են ստանում քաւորից-փնջի փարու։

Ուրիշ հայ երկրներում թաղաւորն ինքն է գնում իւր հարսնացուն բերելու և առանց պոտակուելու աղջկից չի գուրս գալ գիւղից. իսկ այստեղ, Բասենում և շրջակայքում փեսան իւր իւղում սպասում է հարսին, որ պէտք է բերեն հարսնառները։

Հրաժարականի բոպէին աղջկիը համբուրում է հօր, մօր, եղբօր և միւս բարեկամների ձեռքը, բայց հօր տան օջախը,

թոնդիրը, իւր առաջին սննդավայրը համբուրելու սովորութիւն չկայ: Աղջիկը հեծնում է ձի և նորան ուղեկցում է նորա եղբայրը, որ այդ դէպքում կոչում է մաղար:

Երբ փեսայի զիւղին մօտենում են՝ մաղարը, այսինքն հարսնեղբայրը, հանում է հարսի տակից թամրի բարձը և տալիս է հարսնառներից մինին, որ կոչում է աղուէս:

Աղուէսը բարձն առած շտապում է դէպի թագաւորի տունը: Բայց աղուէսն ամենայն զգուշութեամբ և թագաւորին շրջապատող աղափներից խիստ ծածուկ, բարձը յանկարծ դընում է թադաւորի ոտաց տակը, որ այդ միջոցում աղափներով շրջապատուած կանգնած է և անպատճառ կանգնած իւր տան երդիկի բարձրութեան վերալ, սպասում է հարսի զիւղը մտնելուն:

Եթէ աղուէսի անզդուշութիւնից կամ անշնորհութիւնից աղափները բարձը նկատեն նախքան թագաւորի ոտաց տակը դնելը, այն ժամանակ աղուէսին՝ զուարճութեան համար խիստ գանակոծում են:

Թագաւորի ոտաց տակ բարձի դնելը նշան է թէ հարսը խոնարհութեամբ իւր զիւնը դնում է իւր ամուսնու ոտաց կամ իրաւանց տակ:

Թագաւորը հրամայում է ճարպիկ աղուէսի ձիու վզից կախել թաշկինակ, կամ երեսի սրբիչ կամ մի զորդ գուլպա և ալն, իսկ ինքն թագաւորը իւր տեղը բարձի վերալ անշարժ կանգնած մնում է մինչեւ հարսի ձիուց իջնելը: Հարսը երբէք չէ իջնում թագաւորի տանը, այլ ընդունում են նորան քաւորի կամ թագաւորի ազգականներից մինի տանը: Թագաւորը իրաւոնք չունի գնալ նորա տեսութեան, այլ գնում են նորա կողմից բարեկը նորա մալլը, քոյրը և այլ բարեկամ կանալք և միմիան կանալք և ոչ տղամարդիկ:

Հարսնեղբայրը միշտ անանջատ մնում է իւր քրոջ՝ մօտ Գիւղ մտնելու ժամանակ հարսի գաւակին նստացնում են մի երեխալ և հարսնեղբայրը երիխային իջեցնելու կամ հեռացնելու համար ընծալում է նորան մի ջուխտ գուլպա:

Տան տէրը, որի մօտ իջնում է հարսը, ճաշ է ուտեցնում

հիւրերին։ Հարսը զիշելը մնում է այդ տանը և շրջապատ-  
ւում է աղջիկներով և երիտասարդ հարսներով, որոնք զիշերը  
աշխատում են աղափների ոտամանները կամ զօտիկ կամ այլ  
հագուստ զողանալ, իսկ աղափները, ընդհակառակը, աշխա-  
տում են գողանալ աղջկանցից որևէ է հաղուստ։

Երոյիշեալ եղելութիւնը պատահում է այն ժամանակ,  
երբ տղան և աղջիկը որոշ որոշ զիւղերից են. իսկ եթէ եր-  
կուսն էլ մի զիւղումն են, այն ժամանակ չեն լինում ոչ ա-  
ղուէս, ոչ ըարձ, ոչ հարսի գալուստ և այլն։ Այլ սովորական  
կարգով թագաւորը իւրավիններով գնում է հարսի մօտ և այն  
տեղից եկեղեցի պսակուելու։

Առաւոտը թագաւորը գնում է հարսի մօտ այն տունը,  
ուր նորան երեկեան օքը ընդունել են և այն տեղից իրրեւ մի  
զիւղացի, հանդիսականներով շրջապատուած, նուազածու-  
թեամբ գնում են եկեղեցի պսակուելու։

Եկեղեցի գնալու ժամանակ հարսը գնում է թագաւորի  
յետևից և թաշկինակի մի ծայրը բռնած, որի միւս ծայրը  
կապած է թագաւորի զօտկից, որպէսզի երկուսի արանքով,  
նախքան պատկը, ոչ ոք չանցնի, որ շատ չարազուշակ նշան  
է։ Պսակուելուց յետոյ նոքա գնում են արդէն իրար կողքի և  
առանց թաշկինակի։

Պսակուելու ժամանակ տղան ծածուկ աշխատում է հա-  
նել աղջկայ մատից մատանին և աղջիկն էլ աշխատում է չր-  
տալ։

Եկեղեցուց դուրս գալով ում տան մօտով որ անցնի հսր-  
սանիքը, ամէն ոք թէ բարեկամ, թէ օտար, հարսի զլիսին  
ձգում են զանազան կտոր (չիթ, թաշկինակ և այլն), իսկ ա-  
ղափներին ոչինչ չեն տալիս, ինչպէս անում են այդ այլ տե-  
ղերում, բայց պւակ զնալու ժամանակի։

Եկեղեցուց մինչև թագաւորի տունը դուռնալի նուազա-  
ծութեամբ դանդաղաքայլ ընթանում է հանդէսը և պարում  
են հարսներ, աղջիկներ և տղալք։ Թագաւորի տան առաջ  
պատրաստած է լինում սեղան զանազան ուտելիքներով աղափ-  
ների համար։ Պարելով ընդառաջ են դուրս գալի թագաւորի

մալլը, հայրը. և վերջինիս երևը, դուաբճութեան համար, ավել են քսում, թաղիքի կտոր են գնում զլխին, քթոց են անցկացնում վիզը: Անմից անցնելու ժամանակ հարսի զլխին թուր են բռնում:

«Կանչը», որ նշանակում է լիշտակել զանազան նուիրաբերութիւններ հանդիսականների կողմից, մշեցոց մէջ լինում է երեկոյեան ընթրիքին, իսկ Բասենում լինում է պսակից վերապարձի ժամանակ, թաղաւորի տան առաջ, ուր նորապակները պարտաւորուած կանգնում են մինչեւ կանչի վերջը:

Նորապակները տուն ներս մտնելուց յետոյ աւելը տալիս են հարսի ձեռքը, որ տան յատակը փոքր ինչ աւելում է զանազան կողմերի վերաբ: Քահանան «Ճագմանն» երգելիս թագաւորն և քաւորը իրար կտղիք և նորանց յետելից հարսը երեք անդամ պստուամ են թոնդրի շուրջը, ու իսկոյն շերեփը և աղը տալիս են հարսի ձեռքը, որ շերեփով խառնի թոնդրի միջի զրած կերակուրը և աղ ձղի նորա մէջ: Ապա հարսին տանում են վարագոյրի յետեւ:

Դարավագեազի Խաչիկ գիւղում, հարսը, պսակուելոց յետոյ՝ կրկին վերադառնալով թագաւորի հետ հօրանց տուն, առաւոտը թագաւորի հետ միասին, շրջապատուած աղափներով և այլ հրաւիրականներով, զուռնալի ուղեկցութեամբ, պտտուամ է զիւղի մէջ, ուր բազերում քիւրուների վերայ պատրաստուած է լինում ուտելիք, խմելիք (զինի, արաղ, միրդ, ձուաձեղի) Ուտում խմում են ամէնքը, իսկ հարսն ըստանում է խալաթ (նուէր). Վերջը գնում է թագաւորի տունը, բայց ներս մտնել չէ ուգում առանց ոտնւովոխէքի: Ակեսրայը ականջից բռնած մօտեցնում է նորան ձի, կով կամ երինջ կամ այլ անառուն իրրեւ նուէր, ոտնափոխէք, մակաբներն իսկոյն նշանում են անառունը, ալիքնքն ականջի ծալլը կորում են, և „հուշտ“ անելով խրտնացնում վախցնում են:

Ապա սրահի կտորից չոր մրգեղէն են ցանում հարսի զըլխին և մանր երիխալք մեծ աղմկով և իրար հրելով ժողովում

են: Ճեմում ոտաց տակ կոտորում են կաւէ աման և մակարները կանչում են „կոտրեց:“ Հարսը գնում է իւր տեղը, բայց մնում է կանդնոծ և չէ կամենում նստել, մինչև որ սկսուրից խալաթ ստանայ:

Հին ժամանակ սովորութիւն կար, որ մետաքսէ թելերով պատած եղեգնեալ փոքրիկ խաչ տնկում էին խնձորի կամ նըռան մէջ և դնում էին նորապսակ թագաւորի գդակի ծալրում, որ փոխարինում էր թագը: Այժմ վերացել է:

Ղազախի Արգանթալա զիւղում պսակակատարութիւնից յետոյ, հարսը եթէ նա դնալու է մի այլ զիւղ՝ հանդիսականներով հանդերձ նորից վերադառնում է հօր տունը, ուր պատրաստութիւն տեսնելուց յետոյ նորան ձի են նստացնում, ու եղրօր կամ մօր ազգականի հետ, թագաւորի և նորավինների հետ ձիերով ընկնում են ճանապարհ: Այստեղ էլ ազախները ձիարշաւ են անում, բայց քիչ, ըստ որում ուժերը պահում են իւրեանց զիւղը մտնելու համար:

Բայց եթէ հարսը մնալու է այն գիւղում, այդ ժամանակ պսակը կատարելուց յետոյ հանդէսը շրջում է արդէն զէպի փեսայի տունը: Դանդաղաքայլ զնացքին ուղեկցում են զուռնան, գիւղի երեխայքը, որոնք բղաւելով, ուրախանալով զընում են: Փեսի տան օրակին հասած՝ հանդէսը փոքր կանգ է առնում, ընդառաջ են դորս գալի փեսայի մարը, քոյրը, հարսը և միւս կին ազգականները, մին մին մօտենում թագաւորին և հարսին և համբուրում են նորանց և պսակը շնորհաւում:

Ճատ գուարճալի է այդ տեղ, որ երեմն ծերունի փեսահայրը սկսում է պար գալ, ճարպիկ շարժումներ անել, քաշքշել իւր կնոջը, որ նա էլ օրօր գայ, ուժով բռնում է կնոջը որ այնքան բազմութեան մէջ համբուրի, խախկ ու խալտառակ անի: Հանդէսը առաւել գուարճալի անելու համար թագաւորի մակարները ալիւր են ցանում, քթոց են ծածկում թագաւորահօր զլխին, բայց նա առանց մաղաչափ նեղանալու շարունակում է պարել, ուրախանալ:

Սրահումը հարսի զլխին ցանում են չամիչ և այլ չոր

մրգեղէն, որ մանր տղայք իրար հրելով ժողովում ուստում են: Ճեմր անցնելիս խաչեղբարը թուրը բռնում է թագաւորի դըլ-խին և թագաւորը կոտրում է իւր ոտաց տակ դրած կաւէ ամանը և անցնում է: Ապա հարսին տանում են կանանց բաժին:

Վազարշապատի գիւղերում սկսուրը տան հարսի շեմում, զիսին, գնում է մի կտոր հաց, իսկ տան ներսը՝ աւելը տալիս են հարսի ձեռքը:

Հին նախիջևանում, Հին Քուղայում, Ագուլիսում, Վազարշապատի և Բասենի գիւղերում հարսին հօր տանից գուրս բերելու և եկեղեցի տանելու խառը բոսկին հարսնեղբարը աշխատում է համբուրել թագաւորի կողմից եկած հարսներին և այդ համբոյը կոչում է խնամապաշ:

Հին նախիջևանում պասկից հանդէսը վերադառնում է ուղղակի թագաւորի տունը, որ դիմաւորում և համբուրել են հարսին, թագաւորին և խաչեղբօրը, պարում են, երբեմն պարում է և թագաւորահայրը, որի երեսին արտեզ ևս ցանում են ալիք, զլուխը անցնում են մաղ, հարսին տալիս են խալաթ և հրաւիրում են ներս:

Թաւալու գիւղում, Խոր Վիրապի մօտ, հարսին եկեղեցուց բերում են փեսայի տունը, նորա առաջ պարում են, գուրս են բերում չոր մրգեղէն ափսէի մէջ, վրան խաչաձև դրած հացի երկու լաւաշ և սոցա վերայ տնկած խաչաձև մեղրամոմերի: Պարելուց յետոյ միրզը տանում են խուռն հանդիսականների վերայ և լաւաշները դնում են հարսի զլիսին և ներս տանելուց ու իւր տեղը կանդնեցնելուց յետոյ վերցնում են: Ճեմում թագաւորի ոտաց տակ կաւէ պղուղ են գնում ոտով կոտրելու համար:

Ագուլիսում պատակակատարութիւնից յետոյ նախ գնում են աղջկայ տունը, ճաշում են և ապա փեսայի տուն գնալու ժամանակ նորապատակների բարեկամները փողոցում սեղան են սարքում և հանդիսականներին հիւրասիրում են: Թագաւորի ծառան (եթէ կայ) խալիչա է փռում նու ապահների ոտաց տակ և նոքա, վրայից անցնելով, փող են նուիրում ծառալին: Թագաւորը տան բաղում աթոռների վերայ նստում են հարսն ու

փեսան և ընդունում են իւրեանց բարեկամների շնորհաւորութիւնը և նուէրները (շալ, թաշկինակ, մետաքսէ կտոր և այլն) որ մատուցանում են պարելով ձեռ քում բռնած։ Ապա հարսին տանում են կանանց սենեակը։

Երեկոյեան զալիս է հարսնեղրայրը, բերելով կերակուր հարսի համար, որ այդ օրը և հետևեալ օրը կերակուրն ստանում է իւր հօր տնից։

Երեանում և Վաղարշապատի գիւղերում պսակի ժամանակ, եկեղեցու մէջ, հարս ու փեսան աշխատում են իրարից խոր մատանին և մինը միւսի ոտը սեղմել, ըստորում, նորանց կարծիքով, ով ում մատանին հանեց և ուր սեղմեց, նա էլ կեանքի մէջ կիշխի միւսի վերայ։ Այս սովորութիւնը կալ և Քարալագեազի բնիկ հալ գիւղերում (Խաչիկ, Կնիշիկ, Արփա, Աղաւնաձոր և այլն)։

Թաղաւորի տնից դուրս են բերում ձուաձեղ, հալուա, գինի, որոնց համը տեսնում են թաղաւորը և քաւորը։ Հենց այդ ժամանակ էլ խալաթ են նուիրում հարսին։ Թաղաւորի մայրը և աղջական կանալք պարելով՝ բարեւում են նորապատկներին, համըւորում են հարսին և թաղաւորամայրը իւր նորապատկի որդու բերանը դնում է մի կտոր շաքար։

Ճեմով անցնելիս քաւորը թուրը բռնում է զլուխների վերայ և թաղաւորի ոտների տակ վշշելու համար դնում է կաւէ ափոէ։ Քահանան շուրջառը ծածկած իրարից ջոկում է հարսի և փեսայի ձեռ քերը և հարսին տանում կանգնեցնում են կանանց բաժնում փափուկ բարձի վերայ։ Այդ բոպէից քաւորը լանձնում է թուրը թաղաւորին, որ պահում է իւր մօտ մինչև հարսանեաց վերջը։

Փեսայի բարեկամ կանալք հարսին խալաթ են տալի, որ նա համաձայնի նստել։ Խալաթը ժողովում է հարսի համար հարսնաթիրը, մի պառաւ կին հարսի աղջականներից, որ նորան ուղեկցում է և մնում է նորա մօտ մինչև հարսաների վերջը։ Բերում են հարսի բերած բաժինքը և կանանց մէջ մի առ մի դննելով ասում են «խնամին շէն կենայ»։ կանալք պարում են, ուրախանում են և երեկոյեան ցըւում։

Դարալազեաղի զաղթական հայերի մէջ, երբ հարսանեաց հանդէոր պատկից վիրագաւնում է թագաւորի տունը, հարու զլլիմին ցանում են չոր միրգ: Բարեկամները սովորաբար ընդառաջ դուրս գալով բարեւում են, իսկ ազափները ծիծաղելու և զուարճութեան համար երգում են հետևեալ երգը՝ զիմելով թագաւորի մօրը:

Թագաւորի մէր, դուս արի,

Տես քէ ինչեր եմ բերել,  
Ինչեր մինչեր եմ բերել,

Քէ դաստա գիւլ եմ բերել,

Թագւորի մէր, դուս արի,

Տես քէ ինչեր եմ բերել,  
Ինչեր մինչեր եմ բերել,

Կարմիր խնձոր եմ բերել,

Թագւորի մէր, դուս արի,

Տես քէ ինչեր եմ բերել,  
Ինչեր մինչեր եմ բերել,

Քէ աշքի լուս եմ բերել:

Թագւորի մէր, դուս արի,

Տես քէ ինչեր եմ բերել,  
Ինչեր մինչեր եմ բերել,

Քէ ոժ (ոչժ) թաղաթ (նոյնը) եմ բերել.

Թագւորի մէր, դուս արի,

Տես քէ ինչեր եմ բերել,  
Ինչեր մինչեր եմ բերել,

Քէ ծամ փետող եմ բերել:

Թագւորի մէր, դուս արի,

Տես քէ ինչեր եմ բերել,  
Ինչեր մինչեր եմ բերել,

Քէ աշք խանոս եմ բերել:

Թագւորի մէր, դուս արի,

Տես քէ ինչեր եմ բերել,  
Ինչեր մինչեր եմ բերել,

Բերան ծռող եմ բերել:

Թագւորի մէր, դուս արի,

Տես քէ ինչեր եմ բերել,  
Ինչեր մինչեր եմ բերել:

Ջերեփդ խլոխ եմ բերել:

Թագւորի մէր, դուս արի,  
Տես քէ ինչեր եմ բերել,  
Ինչեր մինչեր եմ բերել,  
Պուճաղդ քանդող եմ բերել:  
Թագւորի մէր, դուս արի,  
Տես քէ ինչեր եմ բերել,  
Ինչեր մինչեր եմ բերել,  
Դուխող թագող եմ բերել:  
Թագւորի մէր, դուս արի,  
Տես քէ ինչեր եմ բերել,  
Ինչեր մինչեր եմ բերել,  
Քէ տնէ դուս խանող եմ բերել:  
Թագւորի մէր, դուս արի,  
Տես քէ ինչեր եմ բերել,  
Քէ գեօլի զազ եմ բերել,  
Կեղուն կէս գազ եմ բերել:  
Թագւորի մէր, դուս արի,  
Տես քէ ինչեր եմ բերել,  
Թունդրին կոխող եմ բերել,  
Ակէն խանող եմ բերել:

Տանը մօտեցած՝ դուռնաշխն ստանում է իւր խալաթը։  
Ստանում է խալաթն ոյնպէս և հարսնեղբայրը։ Նորապսակները  
ներս են մտնում տուն և տեսնում են, որ թագաւորի թախտին  
նստած է մի երեխայ, իսկ հարսի տեղում նստած է մի աղ-  
ջիկ<sup>\*)</sup> որոնք քաւորից մի քանի կոպէկ ստանալով հեռանում  
են տեղներից։ Սակայն հարսը մնում է կանգնած իւր տեղը,  
չէ կամենում նստել. զալլա է սկսորայրը, խոստանում է նուի-  
րել նորան՝ օրինակ մի կով և ապա թէ հարսը համաձայնում  
է նստել։

Երբ ամենքն էլ տեղաւորւում են և թագաւորը իւր քա-  
ւորով և ազափներով նստում է իւր թախտը, այդ ժամանակ  
սկսում է ծաղը։ Թագաւորի բարեկամները իւրեանց տներից  
բերում են թագաւորի համար նուէր, այն է երկու երեք գա-

<sup>\*)</sup> Երեխալաթը նստացնում են որ նորապսակները ծննդաբեր  
լինիւ Խմբ.

թալ, մրգեղէն, եփած հաւ, և այն և վրան վառած մեղրամոմեր: Այդ նուէրը կոչում է ծաղ:

Հենց որ իւրաքանչիւր անդամ ծաղը դրսից բերւում է ներս, թագւորի երկու կտղքին նստած երկու ազափներից մինը բացականչում է: «Ա եաւ որ էկաւ, բարով էկաւ: Թագւորի ճընկըներ: »

— «Համմէ»: Խսկոյն պատասխանում է նորան միա կողքի ազափը: Ապա շարունակում է առաջինը, յիշելով ծաղ բերողի անունը.

«Ներսօն յիշայ, Թագւորին բարի,  
 «Սսված իւրը տայ հազար բարի,  
 «Ռտն ոյխար, տկով դինի,  
 «Սսված թագւորին օխտը որդի,  
 «Օխտը որդու սեղան նստի,  
 «Կիւտանը դաշտը պանի,  
 «Զար կամը դուռը պատռուի,  
 «Հայ տունը շէն՝ հայ տունը շէն: »

Նոյն Դարալագեազի Ազատակ գիւղում նոյն խօսքերը կըր-ինում են հետևեալ կերպով.

Մարկոսն ուզեց թագւորին բարի,  
 Սսված տայ ընդարը հազար բարի,  
 Օխտը որդու սեղան նստի,  
 Կիւտանը դաշտը բանի,  
 Զար կամը դուռը պատռի,  
 Կատուն մըռընչայ,  
 Մուկը փըռընչայ,  
 Օխտը տարուայ փուշը կընանչայ,  
 Հայ տունը շէն, տունը շէն: »

Այսն մի ծաղ ներս մտնելիս բոլոր վերոյիշեալ խօսքերը նորից կրկնում են և ազափները ծաղերը վերցնում պահում են իւտոյ վայելելու. այդ բոլոր ծաղերը միասին կոչում են թագւաւորի խազնայ:

Երեկոյնան լինում է մեծ հրաւէր: Գիւղի իւրաքանչիւր տան մեծը հրաւիրում է ընթրիքի և այդ երեկոյ, ընթրիքից անմիջապէս առաջ, լինում է կանչ, այն է որ իւրաքանչիւր

Հրաւիրուած իւր կարողութեան չափ մի գումարով նպաստում է թաղաւորահօրը: Մի մեծ սինի դնում են քահանալի և պատռաւոր հիւրերի առաջ, կանգնում է ճարպիկ դաւուլչին, ու ամեն մի նուիրած փող ձեռքում պտտցնելով օդի մէջ՝ լիշտակում է տուողի անունը և դնում է սինու մէջ: Առաջին նուիրաբերութիւնը անում է քաւօրը:

Կանչը վերջանալուց յետոյ մկանում է ընթրիքը, որից յետոյ պարողները՝ արք և կանալք կազմում են մեծ շղթայ և մինչի ժամի 3—4 առաւտեան պարում են 12 տեսակ պար, որոնց եղանակները նախ ծանր են և ապա առտիճանարար արագանում են: Պարերի տեսակները սոքա են: 1. Դանր գեօնդ. 2. Ֆունկ կրտրուկ, 3. Մալմ. 4. Երեք տո. 5. Մաշկէ. 6. Ճկօրօր. 7. Եարդեօգալ. 8. Աէթայի. 9. Թալափի. 10. Ալրգմա. 11. Եալի. 12. Թռուկի: Այս պարերի մանրամասն նկարազրութիւնը կարելի է կարդալ „Շանապարհորդական նկատողութիւնք“ աշխատութեան մէջ Քաջրերունոյ:

Հին ֆուղարում կամ հին նախիջեւանում հարսանիքի վերջին երեկոյին լինում է կանչը: Այս տեղ էլ առաջինը նուիրում է քաւօրը: Կանչը կատարում է ազափիներից մինը-ճարպիկը-որ իւրաքանչիւր նուէր յիշելիս դիմում է թաղաւորի մակարներին (ազափիներին) արս խօսքերով:

— Թագաւորի մակարներ:

— Ամէն, ամէն. պատասխանում են մակարները միասին:

— Աստուած ձեզ բարի ամէն. Աստուած սաղ պահի քաւոր ազէն, Աստուած նորա որդուն (կամ եղբօրը և այն) փոխանի, որ յիշեց մեր թագաւորին 10 մանեթ, շէն կենալ, շէն կենալ:

— Ճէն կենալ, շէն կենալ. պատասխանում են մակարները:

Այսպէս էլ շարօւնակում է իւրաքանչիւր նուիրողի համար: Ապա վերջում յաբժնում է ընդհանուր գումարը, որից և ստանում է իւր վարձը ներկայ քահանալի ձեռքից, իսկ գումարը բանձնում է թագւորահօրը:

Ղազախի Ռւգունթալա զիւղում նոյնպէս լինում է վերջին զիշերը նուիրաբերութիւն, որ այն տեղ կոչւում է յիշելիք:

Մի ճարպիկ և լիզուանի մարդ, գլխաւորապէս դաւուզին (թժրկահար), կանգնում է տան մէջ տեղ, հանդիսականների առաջ և զանազան աւելցուկներով գովում գովաբանում է նուիրողներին՝ ձեռքում խաղացնելով նուէրը ծատ տասնեակ տարիներ առաջ, շատերը գիւղացիներից այդ յիշելիքի երեկոյին փողի փոխարէն լիշեցնում էին կով, խոզ, ձի, փեթակ մեղու և այլն:

Սովորաբար ճարպիկ լիշողը դիմում է թագաւորի մակարներին:

— Այ թժքաւորի մակարնի. կանչում է նա:

— Համմէ համմէ. պատասխանում են նոքա:

— Աստուած ձեզ պարի ամէն, շէն կենալ Պուգեասանց Քիքին (Քրիգորը), Աստուած նրան հաստատ պահի, մեր զիւղեց, մեր իշխաններից անպակաս անի, նրա մինը հարիր տեսանալ՝ հարիրը՝ հզար. Ըստված նրա սուփրան քցած պահի, թիւնզին դրած, էս ուրախութիւնը մի օր էլ Աստուած նրան արժանացնի, ըսօրէց էլ նրա որթու կարմիրը կապենք, որ լիշըցը և մեր թագաւորին մի լաւ կով ֆորթը տակին, շէն կենալ, շէն կենալ:

— Ճէն կենալ, շէն կենալ. կրկնում են մակարները:

Գիւղի չարաճընի պատանիները, որ իրեւ հանդիսատես ներկայ են լինում, սկսում են կովի նման բառաշել, ձիու նըման խրինչալ, խոզի նման կզկզալ, մեղուի նման բզզալ, նայած՝ թէ բնչ է լիշեցրած։ Սակայն ալժմ լիշեցնում են միայն դրամ և դորանով փակուել է տղալոց չարութեան ասպարէզը.

Դարալագեազի գաղթական հայերի մէջ, կանչի զիշերը, երբ հրաւիրուած ժողովո բդը անձնատուր է լինում պարի և ուրախութեան կամ մասամբ արդէն ցրուած են լինում, թագաւորը, ազափները և այլ մերձաւոր ընկերները հաւաքում են առանձին սենեակ կամ տուն և ուտում են հարսի հօրանց տնից ուղարկած ուտելիքները։ Այս ընթրիքը ասում է „սկըռժաժամ!“

Դաւալու գիւղում թագաւորի „որսից“ յետու է լինում հակուաժաժալ։ Այդ տեղ զոքանչը փեսալի համար ուղարկում

է մի քանի գալթայ, եփած հաւ, մի աման հալուա, մէջ տեղը դրած արծաթ մանէթ, աւելի կամ պակաս, ըստ կարողութեան, իբրև նուէր փեսալին: Ձուռնան ուղեկցում է այդ ուտելիքը մինչև փեսալի տունը:

Բասենում և զիրակում ասւում է «առկաժաժաժուն» և լինում է այն երեկոյին, երբ «որսից» կամ նորանց բարբառով «հաւթուռնքից» մնացած հաւերը ուտում են ազափները և այլ մօտիկ բարեկամները: Այս ընթրիքի ժամանակ թագաւորը չէ կամենում ուտել, չէ կամենում ատամները շարժել, մինչեւ որ հարսնեղբայրը փող է նուիրում նորան:

Ագուլիս „առկաժաժաժի“ փոխարէն, երկուշաբթի օրը լինում է խնամականչ: Ազափբաշին գուռնալի հետ գնում է հարսնահօր մօտ և հրաւիրում է հարսի ծնողաց և բարեկամներին փեսալի մօտ: Փեսալի տանը սորանց ընդունելու ժամանակ փոխադարձ տալիս են միմեանց կարմիր ձու:

Հին Ձուղարում կանչի ընթրիքի հետևեալ առաւօտ, երկուշաբթի օրը, թագաւորի տան բազում, գորդի վերալ քաւորը դնում է խաչաձև թուրը և պատեանը: Մօտն էլ մի բաժակ զինի: Թագաւորը երեք անգամ ծունդ է իջեցնում թրի վերալ և բաժակ զինին խմում: Սալա երկու ազափ ըըռնում են թրի երկու ծալլը՝ սուր բերանը դևալի վեր: Ազափբաշին տալիս է թաղաւորին մի կենդանի հաւ, որ բերել էր նա հարսի հօրանց տնից: Թագաւորը հաւի սուերը բռնած, նորա վիզը այնպէս է զարկում թրի բերանին, որ հաւի զըլուխն խսկոյն և եթ թուզում է: Ազափներն էլ նոյն ձևով մորթում են իւրեանց տնից բերած հաւերը և այս ասւում է «որս տալ»:

Որսի հաւերը եփում են և ալգիներում վայելում են այն ուտելեաց հետ միասին, որ ազափբաշին բերել էր հարսի հօրանցից: Այդ երեկոյին նորահարսը պարում է:

Այս տեղ, ժողովրդի սովորութեամբ ազափբաշին, բացի վերոյիշեալ պարտաւորութիւնները, որ մենք արդէն տեսանք, ունի և հետևեալ պարտականութիւնները. ապահով պահել ժագաւորի դլխարկն ու կօշիկները, որ հարսնատան չար. տղալք

աշխատում են գողանալ և փրկանքով դարձնել. բ. Հարսնատնում թագաւորի համար բերած ոխոնչաները՝ պահել, որպէսզի տղայքը չգողանան ուտեն: դ. Հարսնահօր տնից որսի համար հաւ բռնել և դ. թագաւորի շորերը հագցնել:

Այս պարտականութիւնները Վաղարշապատի գիւղերում դրուած են խաչեղբօր վրայ:

Դաւալու գիւղում ազափնները բերում են մի մի հաւ և առաջինը թագաւորն է զարկում թրով հաւի վզին և զլուխը թողնում, ապա ազափնները: Սա ասում է «որս»: Մորթած հաւերը կանխապէս թագաւորի տան երդիկից ցած են ձգում և ապա պատրաստում են ու ուտում:

Դարալագեաղի գաղթականների մէջ կանչի հետևեալ առաւօտ, երկուշարթի, թագաւորը, քաւորը և ազափնները սազանդարներով կամ գուռնայով պատւում են բարեկամների տները և հաւեր ժողովում, որ ասում է „զուշ” և ծառերի հետ միասին կազմում են թագաւորի խազնան:

Հրաւիրուածները, իրաւ վերջին ճաշ, վայելում են իսաշ, ալսինքն ոտ ու գլուխ:

Սալմաստի գաղթականները հարսանիքի վերջը երրեմն պարում են և երգում հետևեալը.

Լուսնակը կըշտանց կլթայ,  
Խարսները խերանց կէթայ,  
Էշ կնիկը, գէշ կնիկը,  
Մածուն կուզեն թան կըերի,  
Ազրմաղով ցան (աթարի փշրանք) կըերի.

Դարալագեաղի Ազատակ գիւղում, հարսանիքի վերջը, երրեմն երգում են ստորև դրած երգը և հետը պարում են «ծունկ կոտրուկ» պարի եղանակով:

Խատի կէս կորեկ ունեմ ցանելու խամայ.  
Տունը մէ ոսկի (վեցկի) տուէք վարելու խամայ.  
Տունը մէ մանգեռ տուէք ցանելու խամայ.  
Տունը մէ մայրէօն (մանգաղ) տուէք քաղելու խամայ.  
Տունը մէ ջառջառ տուէք ծեծելու խամայ.  
Տունը մէ քեառէշք (որսելի) տուէք էրնելու (քամել) խամայ.  
Տունը մէ սարաթ տուէք մաղելու խամայ.

Տունը մէ թիւրա ( $\frac{1}{3}$ , փթանոց չափ) տուէք չափելու խամայ.  
Տունը մէ ճաղաչ տուէք աղալու խամայ.  
Տունը մէ թունդիր տուէք թիւելու խամայ.  
Տունը մէ կնիկ տուէք խանելու խամայ.  
Տունը մէ մարդ ժողուէք ուտելու խամայ.

Ժողովուրդը ցրուելուց յետոյ՝ թագաւորը, ազափները և  
մօտ բարեկամները բանում են թագաւորի խազնաւն, վալելում  
վերջացնում են, ապա ազափները դատաստան են բանում լուս  
և համբ թագաւորի անունից: Ներկայ եղողներից ով քիչ փող  
է նուիրում ազափներին, վերջիններս խոկոյն ենթարկում են  
նորան զանազան պատժի, կալանաւորում են, կապում են ալլ  
և կնոջ միասին և այլն:

Ճիրակի, Կարսայ և Բասենի գիւղերում առաջինը թագա-  
ւորն է զարկում հաւի գլուխը և այդ հաւը պէտք է ուտեն  
պսակուած մարդիկ, իսկ միւս հաւերից մինը քահանայինն է,  
մինը քէհինը, մինը զուռնաշուն և մինը հարսին ու փեսային,  
մնացածն՝ ազափներին, որ յետոյ ուտում են: Հաւերը ժողո-  
վում են ազափները և դրանց մորթելը կոչում է «հաւ-  
թուռնք»: Սորանով էլ վերջանում է հարսանիքը:

Գարալագեազի գաղթականների մէջ թագաւորի խազնան  
կողոպտելուց յետոյ՝ հարսի մօտ ժողովում են կանալք, բերելով  
իւրեանց հետ զանազան կերակուրներ, որ նորանցում անոււան-  
ում է բեասայ: Ապա զուռնալով գնում բերում են հարսի  
ջէկզը, որ մի ազափի գլխի վերայ դրանց պարելով բերում ենու  
Գալիս է թագաւորի հայրը, որի բացակայութեամբ չէ կարող  
բացուել ջէկզը և տալիս է մի ռուբի և աւելի ըրդսումը  
(նուէր) ջէկզ պահող հարսնամօրը կամ հարսի քրոջը:

Կանալք մի առ մի զննում են ջէկզը և յետոյ յանձ-  
նում փեսայի մօրը, որը իւր կողմից նուիրում է այս  
կամ այն բարեկամին ջէկզից մի զոյտ գուլպայ, ձիու նոխտա,  
ջրի բաժակ և այլն:

Հարսնեղբայրը (խարսնաղբեր) որ մինչև այդ ըսպէն լի-  
նում է նորահարսի, իւր քրոջ մօտ, ոտանում է փեսայի հօ-  
րից իրբե նուէր մի կարա, կամ գլխարկ կամ այլ հագուստ:

Խաշն ուտելուց յիտոյ երեցփոխը կոտրում է ուրցը և իւր զարդերով մի մի ճիւղ բաժանում է պատուաւոր մարդկանց, իսկ մէջ տեղի գլխաւոր ճիւղը նուիրում է քառօրին և նորանից հկեղեցու օգտին ստանում է նուէրի Քահանան բանում է նաւրուր և խարջրկոթը (տակապները):

Օգուլիսում թագաւորին արգելում է շիմում բարեկամներից մի երեխալ և առանց նուէրի չէ թողնում որ մտնի հարսի սենեակը նարօտը վերցնելու քահանալի ձեռքով։ Քաւորը թուրը հանած կանգնում է՝ քանի որ քահանան կատարում է կարգը, և տպա թրով կտրում է նարօտը և տալիս է թագաւորին բարձի տակ պահելու համար։

Դարալագեազի Կորագիզ, Սէս և այլ գիւղերում, նարօտը անմիջապէս վերցնելուց յիտոյ, ազաֆները բանում են փեսալի հագուստի բոլոր կապերն ու կոճակները, նոյնպէս և արիւնոտ դանակը, որ նորանց բարբառով ասում է խանգեօրծ, այն է հանգոյց։ Նոյնր անում են և հարսին նորա հարսնիքնիւրերը։

Հարսանիքը սորանով վերջանում է, բայց փեսան եօթ օր պաս է պահում, որ եօթն արու զաւակ ունենալ:

Պատաւելուց յիտոյս երը նորահարսը առաջին անգամ զընում է եկեղեցի, նորա դէմի պատկերի շուրջը վառում են շատ մոմեր։ Մեծ պասի միջենքին հարսի հայրը իւր աղջկայ համար բերում է թարաղ, այսինքն զանազան մրգեղէն և ուտելիք։ Դաղկագարդին իւր աղջկան հրաւիրում է իւր տոն և ալդ կոչւում է դարձ, և պահում են նորան մինչեւ Համբարձում։

## Ն Ա Ն Ի Կ Ն Ե Բ

ԵՐԵԽԱՑ ԳԱՆՑԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ.

(Օրօրոցի երգեր)

Ա.

Դարալագեազի Կնիքիկ գիւղում։

Նանիկ ասեմ՝ քնես դու,  
Նանիկ քրտնես դու,

Նաձկածն եղ գցեմ,  
Վարդի նման փռուես դու:

Սիրտս խոցով եարայ ա,  
Թաքուն չի, աշկարայ ա,  
Դեղ կանեմ, դարման կանեմ՝  
Դեսու էն եարէն եարայ ա:

Աստըջունէ նման ա,  
Թոռ (անձրև) կայ, տափը նամանայ,  
Նանին բերի քիանայ (քեզանից)  
Բաջու սիրտը թոռանայ:

Ես նան ունեմ մոլորած,  
Գիշերը քունը կորած,  
Նանն ու բաժին թնչ անի.  
Պուճուր տղայ մլորած:

Հարդախո ցան եմ ածել,  
Բոշիդ նման եմ ածել,  
Ես էլ քեզ ջան եմ ասել,  
Մեծացրած ման եմ ածել:

Նանիկ արա, մեր պատիկ,  
Համիչ բերեմ՝ կեր պատիկ,  
Մառի տակին ձնէ բուկ,  
Քաղեմ եփեմ, կեր պատիկ.

## Բ.

Դարալազեազի Խաչիկ գիւղում պապը իւր թուլին խա-  
զացնելու ժամանակ.

Ձիւնն եկաւ քուկայ քուկայ,  
Պապն ասեց դանեն ուր ա,  
Գէն ասաց, հրէս տարայ,  
Ջունն ասեց, հրէս բերի,  
Պոյիկ թիւկայ,  
Մեղրը կերար, պուլիկս հուր ա:

## Գ.

Նոյն գիւղում, յուսարացին, երեխային խաղայնելու ժա-  
մանակ մալլը երգում է:

Լիսը լիսացաւ.  
Հարսը վերկացաւ.  
Հացը գողացաւ.  
Կերաւ կշուացաւ.

Սկեսուրն իմացաւ,  
Պատրոնը կռուացաւ.  
Գնաց թուրքացաւ,  
Տէր ողորմեա, Տէր ողորմեա.  
Դ.

Ղազախ: Ուգունթալա զիւղում տատն իւր թուին խաղաց-  
նելու ժամանակ:

Պապար կանի կըտիտը,  
Հարսն ու աղջիկ խտի տը (զիրկը.)  
Խնձորը կծի, ծուկ անի,  
Զիզի հարսին կուկ անի.  
Մառի, ծէրի չարթն (կաշաղակ) եմ,  
Ըղջկերանց մարդն եմ,  
Մառի ծէրի հոպոպն եմ,  
Ողջկերանց փոփոքն եմ.  
Մառի ծէրի ճիւղէն եմ,  
Աղջկերանց գիւղէն եմ:  
Ե.

Հին հայուջևանում:

Լալա ասեմ քունդ տանի,  
Չար կամարիկ ջուրը տանի,  
Ով որ քեզ չի սիրում,  
Թող նրան ջուրը տանի:  
Էս օր մեր տուն խան ա գալու,  
Բաղ ու բաղչէն ման ա գալու.  
Հարս ու աղջիկ էցվանումը,  
Թոփի ծաղլիկը մէցդանումը,  
Ուկին ծոցին ճնկճնկաց.  
Ալ ձին տակին խրխնջաց:

Զ.

Երևանում և Ղազախի Ուգունթալա զիւղում, ձեռքերի  
վերայ թուցնելով երեխալին:

Եդ ով էք էդ կտերը,  
Թուցրէք էդ ծտերը,  
Ծզափ տղի տեղն ինչ ա  
Կոկոմ կոկոմ ծծերը:  
Թոփի, թոփի, թուցնեմ,  
Սև հաւի միս կերցնեմ,  
Ծզափ բաշուն հասցնեմ.

## կ.

Հին Նախիջևանում աղջիկ մանկան համար:

Դանդանի դանդան պիտի,  
Մի լաւ տղայ բանդ պիտի,  
Քիբը քար ու քանդ պիտի,  
Դան դանի դան դանեցի,  
Բերանը եկեղեցի,  
Տուն եկաւ համբուրեցի,  
Դուրս եկաւ բարեցի:  
Աղջիկ ունիմ նմանի,  
Չենք տալ հազար թիւմանի,  
Բուրդ բերէք բաժինք անի,  
Ուղտ բերէք բարձի տանի.  
Կտանք մի բաղր բգեանի  
Ջորին գայ ճեհէզը տանի:

## Ը.

Ալէքսանդրապօլում:

Դափին ծափին կուլիուլայ,  
Հալուաչ շաքեար կուլ կուտայ,  
Ելէք, աշեցէք վե գուքայ,  
(Տուբիթ) խանումը տուն գուքայ,  
(Կաբրիէլ) աղան տուն գուքայ,  
Զիլ խորոզը (աքաղաղ) մորթեցէք,  
Թղթով թնդիր վառեցէք,  
Տուբիթ խանումիս փայլ պահեցէք:

## Թ

Դարալսգեաղի Երդափին գիւղում, երեխային լողացնելիս և  
քուն դնելիս:

Երկնը վզիկ,  
Թափտէր ճրէկ,  
Առնէր քնիկ,  
Ջաղամաթի քունը քեզիկ.